

ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ПО ОХРАНЕ И ИСПОЛЬЗОВАНИЮ
ПАМЯТНИКОВ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ
АРМЯНСКОЙ ССР

ГОСУДАРСТВЕННЫЙ МУЗЕЙ ЭТНОГРАФИИ АРМЕНИИ

МАИЯ КАЗАРИН


ХУДОЖЕСТВЕННАЯ РЕЗЬБА
ПО ДЕРЕВУ В АРМЕНИИ

ЕРЕВАН, «ХОРУРДАНН ГРОХ», 1989

445,511 (479,25)

64


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՄԻՆԻսՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՊՀԸՐԵՐԻ
ՎԻԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՅԱՀԱՐՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԱՅԱԿԱՐ ՎՐԱՅԻՐԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԳՐԻ



ՄԱՅԼ ՂԱԶԱՐՅԱՆ

ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ
ՓՈՐՄԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

A-81087



Գյուղական խմբագիր՝

ալբայիմիկոս ԱԼԲԿԵՆԻ ԱՆՈՉԵԼՅԱՆ

Գիրքը երաժարակարքան է: Երաշխանություն
պատճենական գիտության մեջնութեան ԱՎԱՐԵՆԾԻ ԲԱՐՄԵՂՅԱՆ

Դադարյան Մ.

Փայտի գեղարվեստական մորագրությունը Հայաստանում/ Դիմ.
խմբագիր՝ թ. Առաքելյանի. Հեղև Մինիստրների խորհրդին առջնթեր
պատճենական և կուլտուրայի հուշարձանների պահպանության և պ-
տագործման պլանավոր վարչություն. Հայաստանի ազգագրության պե-
տական թանգարանն—Երևան. գրող. 1989.—136 էջ, 72 նկ.:

Աշխատանքը նվիրված է Հայկական կիրառական արվեստի հարկորագույն շրջան-
քից մեջին՝ փայտի գեղարվեստական մորագրությանը. Ներկայացված է հեղեղական
գոները, յարակենքը, գրափակերը, կունյարանի, հնագույնին բրերը (Պաղցաններ,
զաթանաշենքը, զարդ կազմակերն և այլն) դիտորդում ևն ոչ միայն իրենց գեղար-
վեստական գոները պահպանությունը, այն այն սկզբ կապերով, որ երան ունի
ազգային մշակույթի մյուս ընսամասների հետ:

Գիրքը անհատագույն է արվեստահերերի և բնիքերող յայն շրջանների համար:

4904000009
թ. 705 (01) 89

ՀԱՐ ՏՏ.12(22)

© Հայելույի գույք Եղիշեակարյան. 1989
Издательство Хорурданк грох», 1989

ISBN 5-550-00383-X

Փայտի մշակման կուլտուրան սերտորեն շաղկապված է հայ ժողովրդի կենցաղին, նրա ապրելակերպին, նրա արհեստավորության բազմաթիվ ճյուղերին, կիրառական արվեստի տարրեր բնագավառներին։ Փայտը աման էր, օրորոց, դաղղղան, գավազան, մոմակալ, վառողաման, մահճակալ, դաշի կաղապար, կուծ, գարանախչիկ, գրակալ, զահ, եկեղեցու դուռ, պատշգամքի ձևավորված հատված... Հղկված փայտը տախտակը հատուկ մշակվում էր նկարի կամ սրբապատկերի համար՝ դառնում ձևագրի կազմ։ Փայտը, միաժամանակ, գործիք էր, գործիք անհրաժեշտ մաս, որով մշակվում, հղկվում, գեղարվեստական ձևավորում էր ստանում մեկ այլ փայտի փորբիկ հատված կամ մեծ հարթություն։

Փայտուկ, նեշտ մշակվող և գեղեցիկ ֆակտուրա ստացող փայտի առանձնահատկությունները ննարավորություն են տվել այն ներմուծել ժողովրդի կյանքի զանազան բնագավառները։ Դրան նպատել է նաև Հայաստանի փայտանյութի հարուստ տե-

1 Փայտի վրա գեղանկարչական աշխատաքերեր Հայուստանու քեզունած էն եղել շատ օնց։ Խախերինիկ Առաջամանար եղանակը զիմունիկը էր, որի ներ կուղած ամսակալության մասին Մայքու Խորենացի նշումներում է Մահակ Արքանուն։ Խախ առաստակի վրա Հայուստես Ազգայականիկ կողմէց նկարվում է Առաւել հոգիք որդեսած ու լոյս ամսակալու խաչական կուղաց ի սորր պատճենք։ Առաջամանոր պատճենը բարտերեց բաւծեց ինձեր Այն կողմէու Է Բարգավայրին առաջարկվել, որը չըր անու Առաջամանորը։ Բարգավայրին ննար բրում է Անձնագրաց աշխարհը, Ազատից բար բրում մաս Առաջամանոր անձան առան և հասունում և ազտեղ զնում ուղարկելու միջանույն Շուութք պատճենին Հայուստանուն և Հայու հատվածը «Մայքու» Խորենացու Մատնագրությունը պրում է Անձերին, 1885. (2 283—288.)

Փայտի վրա հետրքած սրբապատկերեր պահպանվել են XVII—XVIII դարերից Հայուստանի պետական պատճենարանում, Եղիսաբետի վանքում, Նոր Ջուղայի, Հայեցի, Արաւարձի հենքեցիներում։ Փայտի վրա սրբապատկեր է հետրքութ Վ. Առքնարնից «Առանձինի որդին» սրբաթյան (1885, Հայուստանի պետական պատճենարանու) հասպան Մրագի գալիս էն Հայուստանու, որ նոյն արհեստագործերի շարքում եղել էն նաև գեղանկարչական աշխատաքերերի համար Հայուստանի փայտ մշակող վարպետներ։

սականին: Կաղնուց, հաճարենուց, լորենուց, ծիրանենուց, դեղձենուց, ընկույզենուց, թնդուց ստացված ժոմքը (հատկապն հաճարենուց ու կաղնուց), անգնահատելի նյութ է դարձնել ժողովրդական կիրառական արվեստի վարպետների համար:

«Պատմագրական տեղեկություններից երևում է, որ Հայաստանում փայտը բավական առատ էր, որովհետև բացի Բասենի անտառներից հիշատակվում են այնպիսի ընդարձակ անտառներ, որոնց տեղում այսօր ոչինչ չկա անկանած է, որ ժամանակի ընթացքում այդ անտառները ոչնչացել են»,—գրում է Թ. Թորամանյանը²: Վանից հարավ—արևմուտք գտնվող Խիզանի գալաքտին էր պատկանում Կարմանի գավառակը, որի անտառներում աճում էր դիմացկուն և պինդ արտոն կոչված փայտը: Վանեցիք այս գավառն անվանում էին «փայտի երկիր»: Ասորական մատենագիր Բար Հերքայուսը վկայում է, որ Ամիդի եկեղեցին վերանորոգելու նպատակով, Տարոնի տեր Աշոտ Բագրատունին իր երկրից շինափայտ է նվիրել: Հայաստանի փայտը դուրս էր գալիս միջազգային շուկա: «Իրանից կամուրք էին պատրաստում»:

Մովսես Խորենացին գրում է, որ Արա Գեղեցիկի մանից մետք Շամիրամը Վանի մոտ կառուցում է քաղաք, որի համար կարգադրում է Ասորեստանից և իր իշխանության մոտ տեղերից թերել քաջմարիկ գործավորներ, այդ թվում վեց հազար փայտագործ, քարգործ, պղնձագործ և երկարագործ ընտիր արհեստավորներ³:

Հայաստանի տարածքում փայտի գեղարվեստական փորագրության կուլտուրան եղել է յենուս Վանի թագավորության ժամանակ, որի օրինակները գտնվել են Կարմիր բլուրում⁴:

Փայտն իրերի հարստությունից թելորներ են պահպանվել: Դա պայմանավորված է ոչ միայն նյութի շուտ կոտրվելու, որի և

² Թ. Թորամանյան. Եյութեր Հայկական Հարտարապետության պատմության, Հ. 1, Եր., 1942, էջ 145:

³ Վ. Գաֆազյան. Խամանիք Թուրքաց Հայաստանից «Երկիրի ժողովածու», Հ. 3, Եր., 1955, էջ 492:

⁴ Բ. Առաքյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IХ—XIII դարերում, Հ. 1, Եր., 1958, էջ 206:

⁵ Մովսես Խորենացի. Հայոց պատմության, Ա., 1968, էջ 59:

⁶ Б. Б. Пиотровский, Кармир-Блур. Т. 1, Ер., 1950, стр. 35, рис. 13.

միջատների ազդեցությամբ ոչնչանալու հատկությամբ, այլև այն հասարակական—քաղաքական պայմաններով, որոնք որոշիչ դեր են խաղացել հայկական կիրառական արվեստի ստեղծագործությունների գոյատևման համար ընդհանրապես։ Հայստանի հերթանուական տաճարներում գոյություն են ունեցել նաև փայտն քանդակներ, որի մասին պերճախտու վկայում է Ազգաթանգեղոսը։ Հայ թագավոր Տրդատն առաջարկում է Գրիգոր Լուսավորչին երկրպագել հեթանուական կուռքերին։ Գրիգորը հրաժարվում է՝ պատասխանելով. «Վասն դեցն թէ ասես, զոր կոչես դու աստուած»՝ ստոյգ իսկ են հաստուածք, վասնօյի հաստեալք են ի մարդկանէ, և եղեալք պատկերը ի ձեռաց նարտարի. ոմն փայտեայք են և ոմն քարեալ յը, ոմն են պղնձիք և ոմն են արծաթիք և ոմն ոսկիք. ոչ խօսեալ նոցա երբեք և ոչ իմացեալ և ոչ զմոտա ինչ ածեալ, ոչ վասն քո և ոչ վասն իմ», ապա ավելացնում. «Ի բաց թողէք այսումեան զպղութեան պաշտամունյ, զքարելին և զփայտելին, զարծաթելին և զուկելին պղնձաձոյլ պատկերացդ զի սուս են և սնուտի»⁷։ Բ. Առաքելյանը գտնում է, որ մին պատմիչների գործածած «քանդակեալն» տերմինը վերաբերվում է փայտից քանդակված աշխատանքներին։ Քրիստոնեություն ընդունելուց հետո կրապաշտական շրջանի արձանների կործանման ժամանակ, անշուշտ, առաջին հերթին զոր գնացին փայտն քանդակները։

Միջին դարերից հայկական փայտի գեղարվեստական փորձության բացառիկ օրինակներ են պահպանվել։ Դրանք հիմնականում ենեղեցիների դոներ են, այուների խոյակներ, որոնք, կապված լինելով նարտարապետական կորողի հետ, պատսպարվել են նրա տակ։ Լավ են պահպանվել նաև մի քանի գրակալներ։ Կենցաղային իրերը պահպանվել են շատ ավելի ուշ շրջանից՝ XVIII դարից։ Դրանք եղել են ամենօրյա անհրաժեշտ իրեր, օրինակ՝ դաջի կաղապարները, որոնք արմեստավորների «գործիքն» էին։ Որոշ իրեր ժառանգաբար անցել են սերնդից սերունդ, քանդակագորդ գրաներ, գործիքամաններ, հավանգներ ու գուլպանների կաղապարներ, իսկ որոշ իրեր կապված են հավատալիքների հետ, օրինակ, դադղանները։

⁷ Բ. Գ. Առաքելյան, Քանդակագործությունը Հնէ Հայուսունութ (VI գ. Ճ. թ. ա. — III գ. Ճ. թ.), «Պատմա-քանաքերության հանդես», 1965, № 1, էջ 57։

Փայտի գեղարվեստական փորագրության հարուստ հավաքածու ունի Հայաստանի պատմության պետական թանգարանը: Առանձին նմուշներ պահպանվել են Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանում, Զմառում (Լիբանան), Երուսաղեմում և զանազան այլ վայրերի հայկական եկեղեցիներում:

Խորհրդային շրջանի ինքնուս արվեստագետների փայտի գեղարվեստական փորագրման զանազան տիպի գործերը (մեծ ճասամք դեկորատիվ բնույթի), ցուցարվում են Երևանի ժողովրդական ստեղծագործության տանը: Կենցաղային իրեր՝ դադարդաններ, օրորոցներ, տաշտեր, գդալներ ու կծեր այսօր են պատրաստվում են Հայաստանի մի քանի շրջաններում (Դիլիջան, Շուգարք, Նոյեմբերյան) որտեղ, սակայն, վարպետներն աշխատում են անձնական հաճախարժության կամ շրջանի ու տվյալ գրույի բնակչության կենցաղի ավանդական պահանջների լինարդաբորով:

Փայտի գեղարվեստական փորագրության արվեստին վերաբերող մեզ հստած իրերը կարելի է դասակարգել ըստ նրանց նշանակության: Քանի դագործական իրեր, ճարտարապետության առնչվող մանրամասներ (խոյակներ և դոներ), գահեր, գրակալներ, դաշի և գրի տպագրության համար պատրաստված կտակապարներ: Իրանց գուգանեռ զարգանում է զուտ տեղական բնույթ կրող ժողովրդական փայտի փորագրության արվեստը, բնդգրկելով դադարդաններ, գայանախշիկներ, գործիքամաններ, օրորոցներ, հավանգներ, աղամաններ, գուպայի կաղապարներ և այլն:

Կիրառական արվեստի այս տեսակի՝ փայտի գեղարվեստական փորագրության ամենակարևոր առանձնահատկություններից է ժողովրդական հենքը, իրի կիրառական նշանակությանը պայմանավորված գեղարվեստական ծևավորումը: Սա հնարավորություն է տալիս փայտի գեղարվեստական փորագիր իրենց պայմանականորեն դասակարգել երես խմբի՝ արոֆեսիոնալ և ժողովրդական վարպետների գործներ: Անշուշտ, սահմանագտումը պայմանական է և բխում է փայտի վրա կատարած ստեղծագործական աշխատանքի բնույթից: Մի դեպքում գործ ունենք սրբիկանական արվեստագիտի մետ, երբ փայտի գեղարվեստական փորագրությունը տվյալ վարպետի մասնագիտությունն է:

(այդպիսիք էին նաև միջնադարյան ճարտարապետները), իսկ մյուս դեպքում գեղջկական իրեր ձևավորող վարպետի նետ:

Կարեւոր առանձնահատկությունն է նաև փայտի գեղարվեստական փորագրված իրերի մշակման, նրանց ձևերի, զարդերի պահպանական ընկալումը, որը հաջորդաբար անցնում էր սերբներց սերունդ, վարպետից վարպետ, իրից իր: • Փայտի գեղարվեստական ձևավորումը մշակել է նաև փորագրման տարրեր տեսակներ՝ բարձրաբանդակ, հարթաքանդակ, ցածրաքանդակ, կոնտորային, փորվածքային, միջնորմային և այլն; Կիրառական արվեստի մյուս ճյուղերը՝ ասեղնագործությունը, գորգագործությունը, բարի մշակումը և այլն, այդքան «պահպանողական» չեն, ինչպես փայտի գեղարվեստական մշակումը: Դա պետք է բացատրել իրի կիրառման բնագավառով, ճյուղի միանությունով, փայտի ֆիզիկական ու գեղարվեստական հնարքներով, եթե նոյն մոտիվը, նոյն զարդանախչն իր տարատեսակ սբառվերաբանումը հանդիս է գալիս տարրեր իրերի վրա: Գեղարվեստական մշակման ենթարկված փայտն իրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս նրանց աղերսը կիրառական արվեստի միշտաքանչ այլ ճյուղերի, օրինակ բարի մշակման, ուկերչության, գորգագործության և ասեղնագործության նետ:

Փայտի գեղարվեստական մշակումը համաշխարհային կերպարվեստի պատմության մեջ ունի աշխարհագրական մեծ ընդգրկում, սակայն նրան նվիրված գրականությունն այնքան էլ նարուստ չէ: Եվրոպական քանօպարաններում կամ մասնավոր հավաքածուներում պահպանվող փայտն իրերի մասին նիշտառակություններ ու վերլուծական հատվածներ կամ կիրառական արվեստի մյուս ճյուղերի ուսումնասիրություններում: Համեմատանար հարուստ ճյութ կա նվիրվական կամուրքի, նրա ուների մասին: Նշանակալից է ուսու ուսումնասիրությունների ավանդը: Ռուսական փայտի գեղարվեստական փորագրման բազմատեսակ ու բազմաբանագավառ արվեստը հնարավորությունների ստեղծման, որոնցում քննության են առնելի փայտի փորագրության տեսակներն ու նրանց տեխնիկական հնարները, դպրոցների առանձնահատկություններն ու գեղարվեստական արժանիքները:

* А. А. Бобриковский. Народные русские деревянные изделия. Предметы домашнего хозяйственного и отчасти церковного обихода. М., 1913. Т. I—III; В. Воронов,

Հայկական փայտի գեղարվեստական փորագրության արվեստին հնատուկ ուսումնափրություններ չեն նվիրվել: Նրան մասմբ անդրադարձել են արվեստին վերաբերող ընդհանուր քննությի աշխատություններում: Փայտամշակության արհեստին առանձին հնատված է տրամադրել Բ. Առաքելյանը իր «Հայկական պատկերաբանադարձերը 4—7-րդ դարերում» (Երևան, 1949) և «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում» (Երևան, 1958, հատ. I) մենագրություններում: Առանձին նույշարձաններ տեղ են գտել հայագիտական մի շարք աշխատություններում և նոդվածներում:

Հայկական փայտի գեղարվեստական մշակմանը նվիրված ստանձին աշխատությունը՝ Հ. Ազատյանի «Փայտի գեղարվեստական փորագրություն» գիրքը (Երևան, 1961), լույս է տեսել «Գեղարվեստական ինքնագործություններության գրադարան» մատենաշարութ (№ 10), ոնի հայկական փայտի գեղարվեստական մշակման մասին Վ. Բդոյյանի գրած շատ սեղմ առաջարանը: Հ. Ազատյանի շարադրանքը նվիրված է փայտի փորագրման մասնագիտական ուսուցմանը:

Ներկա աշխատանքում ի մի են բերված մեզ հայտնի ստեղծագործությունները, որոնք դասակարգված են ըստ տեսակի՝ ժամանակագրական կարգով: Աշխատանքում ձգտել ենք բացահայտել այդ իրերի գեղարվեստական արժանիքներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև՝ փայտի գեղարվեստական փորագրման արվեստի տեղու ու նշանակությունը հայկական հարուստ կիրառական արվեստում: Սա առաջին փորձն է: Ծովովրդական արվեստի այս կարևոր ճյուղն անշուշտ կունենա իր առավել խոր ուսումնափրությունը:

Աշխատության մեջ փայտի գեղարվեստական փորագրությունը ներկայացվում է երկու հիմնական բաժիններով: Առաջինն ընդգրկում է VII—XV դարերի, իսկ երկրորդը՝ XVI դարից հետո ստեղծված քննության առարկա ստեղծագործությունները: Կման բաժնումը սույն ժամանակագրական քննության շինուալի անդամնությունները են կրում, այլ անդրադարձնում է նաև պատմահասարակական այն

Народная резьба. М., 1925; С. К. Просвиркина, Русская деревянная посуда. М. 1957; Н. Н. Соболев, Русская народная резьба по дереву. М. [Б. Д.]; Поэма о дереве (текст С. К. Жегелова). М.—Л., [1966] и др.

իրավիճակը, որ բնորոշ է նայ ժողովրդի պատմության ընթացքին: Առաջին բաժնում ներկայացվում է բուն Հայաստանում և տեղծական կամ հրան անմիջապես առնչվող փայտի փորագրական արվեստը, իսկ երկրորդ բաժինն ամփոփում է առավելապես հայկական գաղթօջախներում կերտված նշութը և ավանդների զարգացումը մեր օրերում:

ՓԱՅՏԻ ԳԵՐԱՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ VII—XV ԴԱՐԵՐՁՄ

Հայաստանում փայտի գեղարվեստական փորագրությունը գգալի տեղ է գրավել ճարտարապետության մեջ։ Մատնեագրական առյուղներից հայտնի է, որ IV—VII դարերում կառուցվել են փայտակերտեր կամ նրանց տարրեր մասերն ու ծածկերը։ Նույնը շարունակվել է նաև հետագայում։ Օրինակ, Սյունիաց Շար ավանի փայտակերտ եկեղեցին ու պալատների շրեղ դահլիճները, որոնց մասին Գրիգոր Մագիստրոսը գրում է. «Աևեն քեզ ի մերում սեփականին իսկ յԱղուանեանն աշխարհի սասն կոչեցեալ Շար, և ահա ոչ ծերաբանեն քեզ մակարուսեալն փայնջոց գեղեցկողէցն զի, յորմէ սիւն ոչ սակաս նօրս և ասուարս ի կոշարանամ անդ տեսնալ մեր և գերանք գերակատարք և երկայնաձիգք, որ է վկայարան սրբուն Յակոբայ. ամենայն կամք տաճարին գերակայ տախտակը և խոյակը և խարիսխն, և զատակս կազմեալ ի միջոցէ ծառէ յայնմանէ գիոյն գոյ ասէին. զնա և զայս ունան ի նոյն աշխարհին ընդարձակս գոյնը սրանք և միջոցք այնմ տաճարի տեսնալ մեր, որ գրեթէ լայպիսի ոչ այլ որեք բաց միայն ի բազատրեալ բաղարին»⁸։

Փայտաշեն կառուցվածք է եղել նաև Նոր Գետիկում. «և շինեցին եկեղեցի մի գեղեցկաշեն փայտակերտ», «շինեաց և այլ ժամատուն անսոաչ վիմօք մածուցալ կրով, հաստանեղոյն որմօք, փայտակերտ վերնապարկօք, որ յևս ժամանակաց փլալ վերնապարկն։ Շինեաց և գրատուն մի գեղեցկաշեն յարկօք՝ արուեստարո ունենալով զինիսն Մխիթար, որ ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեացն և վանիցն»⁹։

Կարելի է ենթաքրել, որ այդ շինուայումների առանձին մանրամասները՝ դոներ, պատումանեների պատկեներ, քիվեր, խոյակներ, եթե ոչ բոլորը, ապա դրանց մի մասը հարդարվել է գեղարվեստական փորագրությամբ։ Դրա ապացուցը կարող են հանդի-

⁸ Երվազ Մագիստրոսի թղթերը. Աչքառեպապոց, 1910, էջ 221։

⁹ Կիրակոս Դանձուկեց. Պատմութիւն Հայոց. Թիֆլոս, 1909, էջ 199, 209։

սանալ Սևանի Առաքելոց վանքի փայտյա խոյակները՝ իրենց բարձրարվեստ փորագրությամբ:

Սևանում պահպանված փայտն չորս խոյակները նիմք են ծառայում բավականաշափ լայն ընդհանրացումների համար: Դրանք հավանաբար դրվել են դահիճին խոշոր սյուների վրա և պահանջել են լայնաթոփիք նեծանենք: Նրանց վրայի փորագրությունները դիտելու համար անհրաժեշտ էր բավականաշափ լուսավորություն: Ունենալով միակողմանի գեղարվեստական ձևավորում, պետք է ենթադրել, որ նրանք ինտերիերուն զգալի դեկորատիվ դեր են խաղացել¹¹:

Տ. Եղմալյովան, պատմական դեպքերի և սրբագրակերպային մանրակրկիտ ուսումնասիրության ֆոնի վրա, խոյակների զարդարականացնելու համարում է ոչ սահանյան արվեստի արձագանք, թվագրում IX—X դարերով և եզրականացում, որ «այս տիպի խոյակն օրգանական և վահեմի կապ ունի Արևելքի ճարտարապետական ավանդների հետ»¹²:

Սևանի խոյակները նետաքրքիր են իրենց կրու մտածողությամբ, հստակ կոմպոզիցիալով, որտեղ հիմնական տարածությունը գրավում են բանդակային դեկորատիվ սկզբունքով արված տարրեր տիպի բուսական ռնավորված զարդարանշակները. ոլորապտույտ արմավազարդն ու եռաթերթ տերևները: Մրանք լընում են հարթության ողջ տարածությունը, որտեղ արտացոլման սկզբունքով տեղադրված են հիմնական կոմպոզիցիան ստեղծող տարրերը. մեջտեղում կենաց ծառը, որը փորբացված տեսքով կրկնվում է խոյակի աջ և ձախ կողմերում: Ծան առնված է նրագեղ շրջան կազմող արմավազարդի մեջ: Երկու կողմերից բանդակիված աղավճեների պոչերը վերջանում են դարձյալ աղավճեների գլուխներով: Կենտրոնական կենաց ծառի վերևում, երկու կողմերից, տեղակորված են երկու փորքիկ բաղիկներ: Խոյակի ցածի ուրվագիծը նույնպես ալիքավոր արմավազարդ է միշեցնում, որը վերևի մասում հստակում է եռանկյունաձև մասը զարդարանշակ ունեցող երիգով: Նույն ժամանակներում, նույն վարպետնե-

¹¹ Հետազոտություն գրքի են վանքի գովածքներից ձեմ՝ ավելի քաջ ու ոճով անհնարինության այլամբարք վրա: Խոյակները՝ Հ. Մ. Տօքարսկի. Արքիտեկտուրա Արմենիա IV—XIV ա. Երևան, 1961, տաbl. I.

¹² Տ. Ա. Խմանօվա. Սևանու կառուցած պատմական աշխատավոր արմավազարդ է միշեցնում, որը վերևի մասում հստակում է եռանկյունաձև մասը զարդարանշակ ունեցող երիգով: Նույն ժամանակներում, նույն վարպետնե-

ոի ձեռքով են փորագրված նաև մյուս խոյակները, որոնք ունեն ճամփորման անհջան տարրերությունները: Մեկը ցածի երկու կողմերի փոքր կենաց ծառերի փոխարեն ունի վեցքեանի աստղ (արևի, լուսի խորհրդանիշ), իսկ մյուսը՝ հավասարաթև խաչեր՝ վեցքերթիկ ծաղկով (դարձալ արևի ու լուսի խորհրդանիշ):

Հայկական փայտագրության այս օրինակների առանձին հատվածներ՝ արմավագարդը, կենաց ծառը, եռատերք ճյուղերը, աղավնիները, շատ ավելի հին ծագում ունեն, ավելի շատ հանդիպում են վաղ Միջագետքի և Դրանի արվեստում, որոնց վրա և խարսխված էր հիմնականում խալիքաթի առաջին դարերի մշակույթը: Սևանի խոյակները կատարված են արևելյան մտածոյթյամբ, որտեղ հանդես են գալիս Հայաստանի և Մերձավոր Արևելյի միջին դարերի արվեստներում գոյուրյուն ունեցող փոխազդեցորդյունները:

Ավելին: Սևանի խոյակներում փորագրված կենաց ծառի տարրերակին հանդիպում ենք Դիլիճի և աւարողիկուսական պալատի (V դ.) և Արուճի (VII դ.) խոյակներում, վեցքեանի աստղն ու վեցքն վարդակներից ստեղծված խաչերը՝ Աճի պալատական եկեղեցու խոյակում, կենաց ծառը՝ ուրարտական շրջանի հուշարձաններում¹², Երերութի, Քասաղի, Մընճի տաճարների բարավորների վրա: Արմավագարդերը, որոնց երկու կողմից ջոր են խմում եղինիները, ռոշտները կամ աղավնիները, հայկական մանրանկարչորդան մեջ ընդունված պատկերագրություն են: Այն մարմնավորում է մարդու համերժության ձգտումը:¹³:

Սևանի խոյակների վարպետները ծայրամեղ ոճավորում են փորագրված հատվածները, մի հանգամանք, որը նոյնպես ընդուռ է այդ շրջանի արևելյան արվեստին: Ոճավորման սկզբունքն այն աստիճան հրապորիչ է վարպետների համար, որ երբեմն կենտրոնական կենաց ծառը վերցնում են զարդարանշակ երիզի մեջ, նրան տախու են նոճու ձգվածություն, ծայրամեղ ընդհանրացնում են աղավնիների կերպարները, մարմինները վերածելով զարդանախչի՝ հատու ուրվագծով փորագրելով մարմինի եզրագծերը:

Ն. Մատը, խոսելով Աճիի: պալատական եկեղեցու մասին,

¹² Բ. Մ. Արյուշան և Ս. Ա. Սաֆարյան, Պատմություն պատմությունների մասին. Մատուցությունները. Երևան, 1951.

¹³ Լ. Ազարյան, Միջնադարյան միջնադարյան հայ արվեստում, «Հայագիտ», 1970, № 4:

կարծիք է հայտնել, որ այն կարող էր կառուցված լինել VII դ. և վերակառուցված՝ IX-ում։ Միաժամանակ նա գրում է. «Մրոշ նորույցուներ, մասնավորապես ոճավորումը, որը հատկապես նաև դեռ է գալիս զարդանախչ երիգներում, կարող էր ներմուծվել մին օրինակների վերարտադրման ժամանակ, որպես դեկորատիվ փորագրության նոր հնարքներ, ենթադրույթուն, եթե ընդունենք, որ շենքի ցածի նախնական մասերի այդ հատվածները վերանորոգված են»¹⁵։ Այս մորթի վրա նենվելով, կարելի է ենթադրել, որ Սևանի խոյակները կարող էին իրենց նախատիպը ունենալ վաղ միջնադարյան ճարտարապետության մեջ, նախատիպ, որը կարող էր լինել նենց նոյն Սևանում։ Խոյակների գեղարվեստական մեկնարանման համար նիմք կարող էին դառնալ Արևելքի արվեստում տեղ գտած նոյնատիպ մոտիվները։

Սևանի խոյակները գոյություն են ունեցել մինչև 874 թիվը, երբ ավարտվեց Առաքելոց եկեղեցու կառուցումը։ Մրան հաջորդեցի զավթի կառուցումը, որը, հավանաբար, տեղի է ունեցել մի քանի տասնամյակ հետո։ Նշանակում է, Սևանի խոյակները կարող են պատրաստված լինել VII—VIII դարերում կամ IX դարի առաջին տասնամյակներում։

Սևանի խոյակներն իրենց կոմպոզիցիոն կառուցվածքով ուղիղ կապ ունեն հայկական միջնադարյան ձևագրերի մանրանկար խորանների մեջ՝։ Միաժամանակ, Երանք վկայում են հմտու փայտագործ վարպետների գոյությունը Հայաստանում։ Վարպետներ, որոնք ցուցաբերել են փայտի գեղարվեստական փորագրության բարձր կուլտուրս, ճարտարապետական կառուցի մեջ խոյակի գեղարվեստական արտահայտչականության գիտակցություն։ Նրանք հանդես են քերել փայտի հարթության մըշակման ինքնատիպ վարպետություն, կարողացել են խորը փորագրությունը շաղկապել գծապին մշակման մեջ, զգալով կարևոր դրվագները լույս ու ստվերի միջոցով շեշտելու անհրաժեշտությունը։

Անի բաղադրի ամրոցի պեղումների ժամանակ սպալատի հյուսիս—արևելյան դամբիճի ներսում հայտնաբերված փայտայի հատվածները և երկու կամարների սկզբի մասերը նույնական դրա վկա-

¹⁵ H. Marr, Ann. M.—J., 1934, стр. 53.

¹⁶ Ա. Մեսանեան, Հայկական գորգաբեկուր, Եր., 1955, լր. 369—451.

լություններից են: Դրանք ունեն գեղարվեստական ընտիր փորագրություն, որտեղ պատկերված տեսաբանում մեծ բոշունը ճանակերում բռնած հոչշուտում է: Փորրին: Ռիշագրավ է թոշունների փետուրների խիստ ունայտական մշակումը: Մյուս կամարի վրա պահանջմանվել է հովազի գլուխը, որի մորթին մշակված է ուղղագիծ փորագրությամբ: Փայտերի մյուս ազատ տարածություններին արված են բռնական զարդարանդակներ: Բուսական և երկրաշատիական զարդանձերով հեծաններ հաստնաբերվել են Անիի ամրոցի հյուսիսում: Դրանց վրա փորագրված տերևների ու բույրունների գուգորդումով խաչերի հաջորդական զարդարանդակ է ստացվում: Անիում հանդիպում են նաև ոճավորված նրագեղղ շուշանի պատկերներ, տասներկու մատներներով վարդակներ, որոնք հիշեցնում են վարդակ—ենգուղներ¹⁷: Այս փոքր հատվածներն անգամ վկայում են տեղի փայտի մշակման վարպետների բազմակողմանի աշխատանքը¹⁸: Զեայած դրանց զգալի մասն այրված է, ածխացած, սակայն բայց պատկերացում է տալիս միջնադարյան Հայաստանի փայտի մշակման տեսակների, նրա ձևավորման, ինչպիս նաև փորագրման կոլլուգայի մասին:

Ծաղկազարդ և թոշնազարդ զարդարանդակները համարվեն շունչ են փայտի փորագրման, ինչպես նաև գիպսից կամ կրից ստեղծվող զարդարանդակներին (stucco), որն այնպիսի լայն տարածում ուներ Մերձավոր Արևելյան: Սա պատճենական և եօնակի երևոյթ չի կարող համարվել, եթե նկատի ունենալը, որ հայկական ժողովրդական տեսների առաստաղների գերանները փորագրվում են տարրեր ձևերի վարդակներով, այնուերն ու խոյակները՝ զանազան զարդարանդակներով (երբեմն՝ կոր քանդակի ձևով), որոնք կրում են ժողովրդական մտածողության պարզունակության կմիջքը¹⁹:

Հայկական փայտի գեղարվեստական մշակման բնագավառում առանձնակի տեղ են գրաւում եկեղեցիների դռները:

¹⁷ Каталог Анакопского музея древностей. Вып. I. сост. И. Орбелли. С.-Петербург, 1910. И. Орбелли. Избранные труды. Ер., 1963. стр. 30—31. 41.

¹⁸ Այս Հակոբաներց համապետ շքանուն է Բ. Թորամաները, «Թողարկելութ Անիի իւ Հրատակարանից»: Անի քաղաք թէ՝ ամրաց, «Վազա գրահան Հակոբան», գիր 22. Թիֆլիս, 1912. Խ. 2, էջ 23:

¹⁹ Այս կարժեցք պատճենուն է Ս. Մելիքյանի բարեկարգության Մյուսների դուրսցը: Եր., 1960, էջ 33:

Սրբաւոյի բազմակողմանիության, գեղարվեստական առանձնահատկություններով ու արտամայտչականությամբ, նայելական փայտի գեղարվեստական փորագրության բնագավառում բացառիկ տեղ է գրավում Բանահանայտ Մշո Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու փայտյան դրույք:

Մշո դրան մասին առաջին գրավոր նիշատակության հանդիպում ենք անցյալ դարի 90—ական թվականներին, երբ Մշո մասին գրված տպագրություններում ճամապարհորդը նիշատակում է նաև այս դրան «հիմանալի» բանեակեցը²⁰:

1914 թ. Պետքրորոգի գիտությունների ակադեմիայի համագործակցանը, Ս. Տեր-Ավետիսյանը Ն. Մատի գիտավորությանը ու նրա ծրագրով մոտ 1500 նայելական ձևոագիր նախացից արևմտյան նայելական գալխաներից ու նաևնեց Էջմիածնի վանքի մատունադարանից: 1915 թ. Տարոնի ողջ բնակչությունը կոտրվեց կամ գաղթեց, բազանից նրանց հարատությունը: Ս. Տեր-Ավետիսյանը 1916 թ. Շիրջիսում գտավ և Թիֆլիս տեղափոխում Մշո Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու դրույք, որտեղից այն 1925 թ. հանձնվեց Հայաստանի պատմության պետական թանգարանին (Թիֆլիսում մնացին դրան կաղապարները):

Դրույք (185×150) պատրաստված է սև կաղնու փայտից (Մշո չորս կողմը տպածված են կաղնու անսատներ, որոնք շրջապատի բնակչությանը որպես վատելանցուր են ծառապում): «Խնձորի վերկի մասում կա մեկ տողանի արձանագրություն. «Ի թ [վիճ] ԾԶԳ (1134), ես տ[է]յը Թորոս և Գրիգոր և Ղուկաս զե [ող]»²¹: Խնձորի տեսնում ենք, Մշո դրույքը մեզ հասած փայ-

20 Ավետիս, Մայզ «Արքար», Ս. Գևորգով, 1850, գիր Ա. Հովհան, էջ 17-29.

21 Հառնեաւուն քայլակ թանգարականին նպավաժաների, Գրադ 1, ներքին Առաջին, Հայերն արձանագրությունը տառիցներ են, 1964, էջ 60: Դար պատմության մեջ հիմնային գիրքները միանալության է ենթակի հայ արքանի երամանուր Գործին Հայութանց, Տարոնի ու Հայութից գանձը գույքը «Հիմութեաց առքելուր»:

Փայտիք գեղարվեստական ժարագործությամբ առաջնակ գանձնած գանձին և Առքաւուն Հայութանուն երանց պահպանութեան լր ենթակա մեր զիկոցանց Բայանից Վիճեցու բազարում հուշաց հայ արքանին ենթակա մեր զիկոցանց ԱՌ սիմուգանուն Հայութանուն է:

M. M. Gazarian, Decorative Carved as doors of medieval Armenia and their main elements in Soviet Armenia.—«Terzo simposio internazionale di arte Armena», Venezia, 1981, p. 187—193.

տի գեղարվեստական փորագրության այս տեսակի վաղ շրջանի բացադիր օրինակներից են: Բացադիր են նրանք նաև իրենց գեղարվեստական մուածողությամբ, կատարողական արտահայտչականությամբ, իրենց ողջ կատուցվածքով:

Այստեղ գործ ունենք եկեղեցու դռան բարդ հորինվածքի մեջ: Դուք երկիրեղիանի է, ունի լայն ու հաստ շրջանակ, երկու հավասար մասերի է բաժանվում մեջտեղում տեղափորված փայտե առանցքով: Դռան փեղկերը ծածկված են հաստուկ զգերով ստացված երկրաշափական զարդարանշակերով: Նրանք ըստեղծվում են իրար հաստող լայն շերտուր կազմող զգերից, որոնք փնջերով միանում են մեջտեղում փորագրված ուրանիստ աստղերին²²: Նրանք լուրաբանչուր դռան վրա կազմում են չորսական որանկյուն հարթություններ: Թորոս, Գրիգոր և Ղուկաս փորագրողները գտել են ընտրած կոմպոզիցիայի գեղարվեստական արտահայտման հնարները: Դռան նախշերից դորս մնացող դատարկ տարածությունները նրանք ծածկված են նորագեղ, թեթև, սահող, բազմաշերտ զգավոր փորմանքներով: Ամեն ինչ հնարքվում է փորմանքի խորությանը, զծի շերտի հաստությանը: Բազմանկյունների ու աստղերի երիզները շատ ավելի հատակ են ընդգծված, որոնք և ատեղծում են ստվերներ, իսկ բարձր մնացած մասերում զարդարանշակի պատրաճ ստեղծում: Դուների զարդարանիակ մուտիվները կարպետների զարդանախչ են հիշեցնում:

Գեղարվեստական ձևավորման տեսակետից այս աշխատանքին մոտ կանգնած դուների կիրառական արվեստի պատմության մեջ հանդիպում ենք շատ ավելի ուշ: Թե՛ զարդարանշակերի բնույթով, թե տեխնիկական հնարներով (առանձին հատվածների խճանկարային տեղադրումով) Մշո դուներին մոտ է կանգնած XIII—XIV դդ. Մամլյուկների շրջանի գեղեցիկ մի դրու (Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարան)²³: Սուազին հայացքից խառը

²² Զարգանայշի մի մեջ, որը լոյն տարածում ուներ Արևելյան երշիների գոյացքեատական փորագրության մեջ, Հատկապես արաբական արձեստում, արասրաների թագավորության շրջանում (Համադայի որինակներից և նոյնական նախակերպություններից պահպանական թանգարան), Սկզբան Թագերայի միջրարը (XIII դ., Կամբիցի արաբական թանգարան): Սկզբան Թագերայի միջրարը (XIII դ., Կամբիցի արաբական թանգարան) և այն: Համակառակերը տեղադրված է Catalogue du musée Arabe. Le Caire, 1931.

²³ Համաձայը* Maurike Sven Dimand, A handbook of Muhammadan Art. New-York, 1958, p. 127, t. 71. Նոյն զարգանայշը տարրեր կամուպիչին Շաքրերով հանդիպում է

թվացող գարդանախչը կառուցված է խիստ օրինաշահ՝ հնգարև աստեղի միմքի վրա: Հայկական օրինակում գործ ունենք նոյն մոտածողության տարրերակի մեռ: Ծառ ամիելի ուշ արձագանք են նոյն ձևով փորագրված դրսերը Խրթշիայից (Սուամբովի Հին-ի Քոչք բանգարանում):²⁴: Այս ամենը գալիս է հաստատելու, որ նոյնատիպ զարդարանորակ դրսերի կոմպոզիցիաների ստուդումը տարածված է նոյն Արևելքում, հատկապես Հայաստանի հարևան երկրներում, որոնցից պարբերաբար օգտվել են տարրեր ազգերի արմէստագիտներ: Վաղ օրինակներից մեկը Մշո Առաքելոց վանքի դրսերն են: Այդ դրսերի համար հանուխի կարող էր հանդիսանալ կրծք ոչ կրթելու այլ դրու, ապա պարսկական, հատկապես Երա սասանյան շրջանի հետավոր մի հախօրինակ, որի վկայությունը դրան շրջանակն է²⁵:

Դուռը փորագրող վարպետները ազատ չեն յողիկ դրանն անշնչող ոչ մի հատված: Նրանք առանձին երկգններով փորագրում են դրսերի հիմնական հարթությունների շուրջն ընկած տարածությունները, որոնք ամրողացնում են հիմնական կոմպոզիցիան, միաժամանակ հախաքատրաստում անցումը դեպի դրան շրեղ շրջանակը: Վերջին բոլորովին առանձին մտածված, հարուստ զարդարանորակներով հագեցած փայտի լայն երիզ է, որը փայտի փորագրության արմէստի բացառիկ օրինակ է: Այդ երիզը երեք կողմից շրջափակում է դուռը, Երա մեռ կապվելով պիրանք եղբային զարդանախչով: Շրջանակի երեք կողմերն ունեն փորագրության երեք տարրեր մոտիվներ:

Վարպետների համար կարևոր դրան վերին մասն է, որը երկու հավասար մասերի է բաժանվում մեջուղում պատկերված մուսիսիկի ֆիգորով: Ցույաքանչյուր մասում երկուական հեծյալ է պատկերված: Գ. Հովսեփյանի հեծյալներից մեկի վերևի «Տըրդաս» գրությունը համարում է ուշ ծամանակի «ամշնորք զիք» և այն միտքն է հապնում, որ դուռը Մամիկոնյան իշխաններից մե-

²⁴ Гравюры из Симеоновской Айафтерии (Библиотека Мигеона). Гравюры фресок из архитектурных памятников. 86-я. Гравюры Мигеона, Manuel d'art musulman. Paris, 1927. pp. 32-33.

²⁵ Путеводитель по Константинополю и его окрестностям. Составили Корнелис Д. и М. Сказовская. Константинополь, 1919.

²⁶ Այս միտքը առաջին անգամ հայտնի է Ս. Եղ—Ավելիսովը. Բայրա ձեր 1134 թ. ոչ օքրեստության գոր. Մանա.—«Известия Кавказского историко-археологического института в Тифлисе». Т. III. Тифлис, 1925.

կի՝ Ծորտանունկ Ա.-ի կամ նրա որդի Վլագինի մի բաջապրծությունն է պատկերում, իսկ դուռը զոհաբերական նվեր է այդ հաղթությանը²⁶:

Ծրջանակի երկու կողմից ցած են իշխում առասպեկտական և ուսալ կենդանիների պատկերումներ՝ սփինքսներ, զարդանկար թևերով թոշուններ, աղյուծներ, փղեր, գոմեշներ, ոճեղջյուններ և այլն: Մրանց առկայությունը հայկական կիրառական արվեստի ստեղծագործության գեղարվեստական ձևավորման մեջ պատճենական չէ: Այն վկայում է նախատիպի արևելյան, հատկապես սասանյան ժամանակների արվեստի նետ ունեցած կափի մասին: Դա արդարացվում է ժամանակի տեսակետից ևս: Սասանյան թագավորության անկումից ընդամենը չորս դար էր անցել, սակայն պահպանվել ու գոյություն ունեին ոչ միայն հուշարձանները: Շարունակվում էին արհեստավորական ավանդները: Շատ հավանական պետք է համարել նայ վարպետների կողմից իրենց ազգային մտածողությունից ոչ շատ հեռու ավանդներից, ինչպես նաև՝ որևէ պահպանված հուշարձաններ օգտվելը: Ավելին: Մշո Առաքելոց վանքի դռների զարդարանդակները աղերս ունեն իսլամական արվեստի նետ, իսկ շրջանակն՝ ընդհակառակը. թվում է շատ ավելի վաղ արված գործ է, որին նետագայում հարմարեցվել է դուռը:

Վարպետները հմտու օգտագործել են փայտի հաստ շերտը: Հեծյալների ֆիգուրների պատկերման ժամանակ նեղինակները ստեղծում են խորը փորվածք, ազատվում են փայտի ալեղորդ մասերից, ֆիգուրների ձևերը լուծելով բանդակային հստակությամբ: Ֆունք դառնում է տարածություն, որտեղ տեղի են ունենում գործողությունները: Զինված հեծյալները շարժման մեջ են և որոշակի գործողություն են կրում: Վարպետները ձգտում են կերպարների անհատականացման, առկայն դեմքերի մեջ միօրինակություն կա, և անհատականացումն արտահայտվում է միայն բգդեսների մեջ ներմուծված առանձին դեսուալներով:

Դուների շրջանակի գեղարվեստական արժանիքը կենդանիների արտահայտիչ պատկերման մեջ է: Բացատիկ վարպետությամբ են փորագրված կանգնած կամ սլաքով ընթացող ձիերը՝ ցրրագեղ, որվագծային, հստակ ընդգծվածությամբ, ձևերի պատ-

26 Գ. Հովսեփյան, Խըլ. աշխ.

տիկ մշակումներով, նույր դեկորատիվ գեղեցկությամբ։ Սա մի առանձնահատկություն է, որը բնորոշ է նաև շրջանակի կողերի մասի զարդարանակելերին։ Այսուղե կենցրանիները դասավորված են ոիթմիկ, համաշափ նեռավորության վրա, դրված են ներքին լարվածություն ունեցող շարժման մեջ։ Նրանց արտահայտչականությանն օգնում է նաև ոլորապտույտ բռնական զարդարանակը, որը շրեթ տարածվում է երիզի ողջ մակերեսով, անցնում կենդանիների վրայով, նրանց բաժանում իրարից։ Հետաքրքիր է փայտի փորվածքին տիրապես նկատելու և նրա կարողությունները օգտագործելու բացադիր իմացություններ։ Մի կողմից առկա է խորը փորվածքը, որից կենդանիների պատկերումները առանում են նատակ քանդակապիշն լոծումներ։ Մյուս կողմից՝ զարդանախշերն արված են և՛ ուշինքափային, և՛ գծային փորագրության տեխնիկայով, որոնց շնորհիվ նրանք առանձնանում են դռան կենտրոնական ճակատապիշն մասի նիմնական կումպոզիցիայի գործող կերպարներից, հարստացնում են միջավայրը, լցնում ֆրիզի դատարկ տարածությունները և, կորագիծ նրբագեղությամբ անցնելով ուղարկում ուղարկությամբ։

«Տեղական հնագույն հուշարձաններում քրիստոնյա վարպետների ձեռքի աշխատանքում, պարզորդ հանդիս է զայխ այն արվեստի գլուխարվեստական ճաշակը, որը գիտության մեջ հայտնի է իրանակամ և, մասնավորապես՝ սասանյան։ Իրան ներմուծված մուսուլմանական քաղաքակրթությունը նետագայում փոխանցվեց կովկասյան աշխարհին ըստ ժողովրդական հոգեքանության և մշակութային վաղեմի ավանդների ընդհանրության հարազատության», — գրում Ն. Մատը²⁷։

Հին Նրանի և կովկասյան ժողովրդների մշակութային կապերի մասին հայտնած այս կարծիքը հաստատող օրինակներից է նաև Մշո Առաքելոց վանքի Թարգմանչաց նկեղեցու փայտն դրուան գեղարվեստական կերպավորումներ։ Միաժամանակ, Ն. Մատը գտնում է, որ մեծ է իրանամուսուլմանական մշակութային ուղղության նշանակությունը կովկասյան աշխարհում, «ասկայն լոկ հրամրող-ստեղծագործական առումով։ Պղնձի վրա կազմավորված քաղաքակրթությանը նաև չեր տալիս և չեր կարող տալ հիմք, սակայն նա ընդլացնում էր կովկասյան աշխարհի կով-

²⁷ Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения. Петроград, 1915, стр. 15.

տուրական աշխարհայացքը: Նպաստելով նրա միակողմանի կրոնական ուղղության կապանչության հոսանքը ապակրոնացնում էր նաև ռասարակական միտքը և կրանքի կոչում զուտ աշխարհիկ ուղղություն, որն արտահայտվում էր ազգային միջավայրի պարմաներին համաձայն, երբեմն՝ բաղադրացիական արվեստում, իսկ երբեմն՝ աշխարհիկ գեղարվեստական գրականության մեջ»²⁸: Գ Հովհանիշն առնելու է, որ երբեմնի սիմվոլները այս աշխատանքում հանդիսանում են զալիս «փրես զարդ»²⁹:

Մշտ Առաքելոց վաճիքի դուռը, իր գեղարվեստական արժանիքներով, իր զուտ աշխարհիկ թեմատիկայով ու կերպարներով, այն բարձր մշակույթի արտահայտության փայլուն օրինակն է, որտեղ մերվում են նայ կիրառական արվեստի զարգացման տևականությունը հարևան ժողովորդների արվեստների ավանդներին շաղկապված: Եվ իր ներդաշնակության մեջ այն բացադրի տեղ է գրավում հայկական փայտի գեղարվեստական փորագրության պատմության մեջ:

Սեպ Բասած հնագույն դուռներից է նաև Աւանի Առաքելոց վանքի արևմտյան կողմի փայտյա դուռը (Հայաստանի պատմության պիտուական թանգարան, 179×110): Դուռն ունի բնուվազ արձանագրությունը. «Ռ թվ [ից] հայոց ՈՒՆ (1176) նորոգեցա դուռն ս[ուր]ը եկեղեցոյն հրամանաց իշխան Քրիսի և ձեռամք Ցումանինի հիւսանն, որը ընթեռնոյք յիշեսչիք»: Այս հուշարձանի առաջին ըկարագրությունը պատկանում է Հ. Շահ-Խակովնանցին, որը ընթույթ է արձանագրությունը, նշում է, որ դուռն ընկուզենուց է, հնությունից կադրացած³⁰:

Ինչպես երևում է արձանագրությունից, դուռը սպառքաստվել է 1176 թ. Հովհաննես հոյսնի ձեռքով:

²⁸ Խոյե տեղում:

²⁹ Գ. Հովհաննես, նշվ. աշխ.

³⁰ Հ. Շահ-Խակովնանց, Առաքագրավիճ կայսուցիկ էջմիածնի և հինգ գուսանց Արարատյա էջմիածն, 1842, Հայու. Բ, էջ 212: Թեղեն այս, եռեզրեն և մի շարք այլ հուշարձանները հանդիսանում են անհաջորդելի ձև Պ. Ամրատինեց, Տեղեկացր Եղարշակի վայսչառ գուսանը Վազգարշառա, 1895, Պ. Ամբիան, Մարտին Վանեսիկ, 1893, և. Կողայան, Գեղարքունիք կամ Նոր-Բարձրվածք գովաստ Թիֆլիս, 1805, և. Կողայան, Մելիք, «Արքագրավիճ հանգեռ, Թիֆլիս, 1805, պիր 17»: Գ. Հովհաննես, հուցակյանք կամ Պաշտամբ Հայոց պատմության մէջ, Վազգարշառա, 1928, Հ. Ա, եղիշև Մովսեսյան, նշվ. աշխ.:

Ըստնի Առաքելոց վանքի արևմտյան դռուղ ժամանակի փայտի գեղարվեստական փորագրության հնտաքրքիր օրինակ է, որը կերտող վարպետը ստեղծել է կոտ կոմպոզիցիա, համամասնությունների միասնականությամբ և համեստ ու զուսպ փորագրության մեջ ցուցաբերել է գեղարվեստական ընդհանրացման կարողություն:

Հովհաննեսի հյուսնի միակ նպատակը գեղարվեստական ձևավորում ունեցող դրու ստեղծելը չէ: Նա դռան համար պատրաստում է ծանր ու հսատ շրջանակ, որի հարթ տարածությունը լցոնում է նուշարք, իրար կողքի դասավորված քառակուսի խաչերուի: Նրանց խորը բանակված հաջորդականությունը վարպետն աշխատացնում է գծային փորվածրով արված խաչերով, որոնց տեղավորում է ազատ քառակուսիների մեջ: Վարպետ Հովհաննեսն ունի ծավալի զգացողություն, փայտի ծանրությունը թեթևացնելու հնտություն: Դուռ շրջանակը, իր ճարտարապետական փունկցիայից զատ կատարում է նաև գեղարվեստական երկավածքի դեր, որի մեջ տեղավորված է կոմպոզիցիայի հիմնական մասը դրուց: Դուռն իր հերթին ներկայացնում է խաչքար, դրված երկշարք խաչերից ստեղծված երիգի մեջ: Կենտրոնական մասը գրավում է խաչը՝ երկարածիգ, զարդարանդակ, որը շրջապատող ոճավորված արմավազարդերը ոչ միայն լցնում են շրջապատի դաստիք տարածությունը, այլև իրենց համեմատարար թույլ փորագրությամբ ֆոն են ստեղծում խաչի առավել ընդգրծվածության համար: Դուռն հիմնական մասը ոչ միայն հիշեցնում է ժամանակի խաչքարերի կառուցման սկզբունքը, ոչ միայն կրում է քարգործ վարպետների արվեստի ազդեցությունը, այլև կրկնում է նրանց խաչքար ստեղծելու մտածողությունը: Իրան նպաստում է նաև կարծր փայտի՝ ընկուզենու ընտրությունը: Խաչի ցածի մասը դաստիք է, համաչափ փորված կետերով լցված, որը խաչքարի պատվանդան է հիշեցնում: Աշխատանքն ուշագրավ է դիտման տեսակետից ևս: Հիմնական շրջանակի զարդարանդակներով ծանրաբեռնված հատվածից անցում դեպի խաչի թերևներից, ֆոնի թույլ ընդգծված զարդարանիշերը, որոնցից դիտողի հայացքը գետում է դեպի խաչը՝ ընդհանուր հարրություններից շատ ավելի խորը տեղավորված: Ընկուզունու փայտի մուգ շագանակագույն, նույնիսկ սևին տվյալ ընդհանուր միատար գույնը, փորվածքներից անհանգիստ լուսավեր հաջորդա-

կանություն ստացած տարածությունը հյուսնի աշխատանքը ընդհուպ մոտեցնում է մամանակի բարօղութնորի ստեղծագործությանը:

Եկեղեցիների համար փորագիր փայտն դրների ստեղծումը տարածված արվեստ է եղել միջնադարյան Հայաստանում, որի ինքնատիպ օրինակների հանդիպում ներ նաև այլ վայրերում, այդ թվում նաև Տաթևում:

Տաթևի վանքի Պողոս—Պետրոս եկեղեցու դրներից մեկը նոյն կոմպոզիցիոն կառուցվածքն ունի՝ ցածում վարդակ, վրան խաչ կազմնեցված: Հիմք ընդունելով վարդակն ու խաչը, վարպետը փայտի ողջ տարածությունը ծածկում է հնարամիտ, իրարից բոլորուն տարրեր, բար կորագծերից կազմված երկրաչափական ու բուսական նորր մշակմամբ արված զարդարանակներով: Վարպետը հիմնական ոշադրությունը նվիրել է փայտի փորագրման տեխնիկայի մի կարևոր կողմից հիմնական զարդագծի ծավալային շեշտմանը, որին նա հասնում է գոնի երես կամ խորը փորվածքներով: Փորվածքների վարպետության շնորհիվ այն տպավորությունն է ստեղծվում, որ գոյություն ունի երկշերտ զարդարանակ: Բարձրադիր զարդարանախշերը և փայտի հնուացված մասերի զարդարանակները, որոնք, ընդհանուր տարածության ստվերու մասը կազմելով, ֆոն են դատնում հիմնականը առավել նատակ ցուցադրելու համար: Ըստ պահպանված արձանագրության, դուրը նորոգվել է 1253 թ. (2Բ), Տեր Հայրապետի կողմից³¹:

Խաչի տարրերակալով ստեղծված եկեղեցական փայտն դրների մեջ հնքնատիպ տեղ է գրավում Վարագա վանքի դուռը:

Երկփեղկ դռան ողջ տարածությունը ծածկված է իրար մեջ նազնու եռանկյունների համացափ շարքերով, որոնք կատարված են խորը փորվածքով: Դրանք ել ստեղծում են այլ նոյն ֆոնի հիմնական հարթությունը: Բարձրարանակ փորվածքը ունեցող արարեսների կողքին վարպետը տանում է մի ոչ շատ խոր զիծ, որից զարդարանախշերը դառնում են ավելի նորագեղ: Դուռ վերևի մասում տեղապարված խաչերն ունեն ժանյականման փորագրություններ, որոնք հիշեցնում են XII—XIII դարերի խաչքարերը:

³¹ Զաքիք ԷՅ 150×150. Պահպանվում է Հայուսակի պատմության պետական թանգարանում, ուր անդամագիլը է 1821 թ. երեսաշարժից հետո, կենութեանին մասը կոպրած վիճակում:

շրջանակի գիծը: Մյուս գործողությունները տարածվում են դեպի ցած, որոնք հաջորդաբար դուն հարթության վրայով իջնում են դեպի ներքև: Աստիճանական դասավորությամբ, Քրիստոսից ցած գունդում է խաչը, որի երկու կողմերից կանգնած են Հովհաննես Սկրտիչը, Աստվածամայրը, Ստափանոս Նախավլիան և Գրիգոր Լուսավորիչը: Մեջտեղում տեղավորված սուրբ հոգու զալսույան տեսարանի՝ դեպի ցած թոշող աղավնու կտուցից իշնող լուսի ճառագայթների երկու կողմերում հատած են տասներկու առարյաները: Նրանցից ցած աղոյող վելարավորները Դանիել Վարդապետն ու Ներսես Եպիսկոպոսն են, դուն պատվիրատունները: Սուրբ հոգուց ցած, կամարակապ հատվածում, տեղավորված է եռաֆիգոր մի կոմպոզիցիա: Գ. Հովհաննիանը գրտնում է, որ կենտրոնում բյուզանդական կայսերական գգեստավորմամբ կանգնած թագակիրը մարմնավորում է տիեզերքը, իսկ մարդկային գլխու ու ծոծրակին ամրացված շան գլխով անձնավորությունը հետանուությունն է, որի կողքին կանգնած է պարթևական տարազով մնել այլ անձնավորություն: Աղավնակերպ Սուրբ հոգին, շորջը հատած առաջապներն ու կամարի տակ պատկերված զանազան ազգերի ներկայացուցիչները պատկերող տեսարանը XI դարի մանրանկարչության մեջ ընդունված պատկերագրություն է, որտեղ թագակիրը Քրիստոսն է՝ ավետարանը ձևորին, տարբեր ազգերի շրջանում³⁵:

Աւանի Առաքելոց վանքի թարգմանչաց նկեղեցու հարավային դուռը գրավել է առև. Մ. Վագների ուշադրությունը, որը գրել է: «Կիսավոր մուտքի դունները կազմված են օրինակելի փայտն փորագրություններից, որոնք իրենցից ներկայացնում են ամեն տեսակի զարդարանքներ և փիգորներ»³⁶: Սա գրվել է այն դեպքում, երբ դրա նեղինակը շատ գգուց է Հայաստանում տեսած գեղարվեստական արժանիքները զնանաւելի:

Ո՞ւն է այս աշխատանքի լավ տարածում ստանալու և բարձր գնահատվելու գաղտնիքը. գեղարվեստական մտահղացման ու իրականացման մեծագույն հնտությունը, որը Ղ. Ալիշանն անվանում է «ճարտարագոյն»³⁷:

³⁵ Խայեն ուժքամ:

³⁶ Wagner Moriz, Reise nach dem Ararat und dem Hochland Armenien. Stuttgart und Tübingen, 1848, p. 30.

³⁷ Ղ. Ալիշան, Միասնական գէնէտիկ. 1893, էջ 86:

Արքանամ վարպետի աշխատանքի նմտությունն արտա-
նայտվել է թեմայի ընտրության, երա արտահայտչականության
հնամար գտնված մեկնաբանման մեջ, որտեղ գործ ունենք բազ-
մապան պյուծել և բազմաթիվ կերպարների հետ: Դռան գեղար-
վեստական կերպարը ձևավորվում է հարցության վրա բացվող ու-
լինելով, տարածության մեջ երա բարդանալու շնորհիվ: Հեղինակն
ունի փայտի տարածքի վրա առանձին տեսարաններ ստեղծելու
կարողություն, օգուտ է կոմպոզիցիայի ոիթմը, որը վերևից իշնում
է դեպի ցած ու ավարտվում բազակից Քրիստոսի խմբով: Վար-
պետը ճգտում է կերպարների անհատականացման, տարած-
չորի հնամար գտնելով համապատասխան արտաքին, տարբերիչ
դեստացմեր: Նա օգտագործում է և' բարձրաբանակի, և' հարրա-
բաներակի հնարքները: Փորագրում է ազատ, հմտու, ձևերին տա-
լով թերեւություն, ինչ-որ մի տեղ մուսեմալով նաև գնդանեար
չական արտահայտչականությանը: Դա ևս վարպետ Արքանամը
արվեստը բնութագրող առանձնահատկություն է: Հավանական
կարելի է հնամարել երա գրիշ ու մանրանկարիչ լինելը, քանի որ,
ինչպես վկայակրություն է Գ. Հովսեափանը, 1471 թ. սպետարանի
հիշատակարանում հնանդիպում ենք Դամիելի աշակերտ «զԱրքա-
նամ անվարժ գրչիկ» արտահայտությանը, իսկ Մաքենոսի պատ-
կերի տակ կա «զԱրքանամ միարիշ լիշեա և ասա միշտ տր. ողոր-
մեա»²⁸:

Արքանամ վարպետը ողջ կոմպոզիցիան վերցնում է զարդա-
րանդակի շրջանակի մեջ, որում նոյնական արտահայտվել է արվես-
տու զբաղվող փայտի վարպետի գեղեցիկ մտածողությունը: Շրջ-
անակը նոյնայեն բաժանված է առանձին հատվածների: Այն
հավարկած է տարբեր փայտերի կտորներից, իսկ զարդանախնե-
րը աղերս ունեն արեւադան զարդարանդակների մոտիվների հետ:
«Ի. Հովսեափանը գտնում է, որ, իր ոճով, շրջանակը կարող է
շատ ավելի հին լինել»²⁹: Բոյոր դեպքերում, եթեն անզամ
Արքանամ վարպետն օգտվել է հին օրինակներից, ասպա օգտվել
է նմտորեն, ճաշակով, գործի բարձր գիտակցությամբ և վարպե-
տության ակնհայտ կարողություններով: Շրջանակի վրա տես-
նում ենք հրուսակագրության զարդարանդակ, որը պահանջում է փայտի

²⁸ Գ. Հովսեափան, էջ. աշխ., էջ 25—26.

²⁹ Խայե տէքում:

փորագրության լավատեղյակություն: Առանձին բառակուսիների ներսում տեղագործած են թերևն և նրագեղ արված խաչեր, ծաղիկների ոճակորչած վեցլակներ, հավերժության խորհրդանշներ և այլն: Այս ամենց դուրը տառում է տոնական շքեղություն, նիշշեցներով և խաչքարներ, և՝ մանրանիկարչություն, և հավանաբար այդ դարերում գոյություն ունեցող պրապատկերներ:

Թարգմանչաց նկեղեցու փայտյա դրոները բացադիկ չեն եղել Սևանի վանքում: Ինչպես նշվում է մի ավետարանի նիշատակարանում, վարդես Դանիելը՝ վերոնիշյալ դուան պատվիրատուն,

«զարդարէ եկեղեցի,
ես առաել զՍևան կղզի
ի զանազան զարդ պերճալի,
պանեալ ի տիպս հրճուելի»⁴⁰:

Պահմանված փայտն դրոներից Սևանի Սուպերեղոց վանքի թարգմանչաց նկեղեցու դրոները միակն են, որ ունեն պուտեստային փորագրություն:

Փայտի գնդարմեսատական փորագրության ոճով և զարդամուտիվներով առանձնակի խումբ են կազմում Թեղողոսիա բաղարի (Ղրիմ) եկեղեցիների դրոները:

Թեղողոսիայի եկեղեցիներին նվիրված առանձին աշխատություններում նիշատակվում են մի քանի դրոներ, որոնք զարդարել են տեղի ար. Սարգիս և Հրեշտակապետաց եկեղեցիները: Նրանք ստեղծվել են տարրեր ժամանակներում, տարրեր վարպետների կողմից և, բնականաբար, ունեն բոլորովին ինքնուրույն բնույթ և արժանիքներ:

Նրանք հիմնականում պատրաստվել են XIII—XIV դարերում: Հանգույնը Գարրիել և Միքայել երեստակապետերի եկեղեցուն է, որն այստեղ է բերվել ար. Սարգիս եկեղեցուց (Թեղողոսիա, Երկրագիտական բանգարան): Այն կատարված է ընկողեցու ընտիր փայտից, վերին մասում ունի արձանագրություն, ըստ որի դռան պատրաստման տարեթիվն է ՊԺԸ: (1368)⁴¹: Այս դռան

⁴⁰ Դ. Հովհաննես, Խոյք աւղածու

⁴¹ «Եթե Ճամփակածց ՚ի թիվն ՊԺԸ մարտի 11-ը ունի համ Շնուպացու գիրացած արձանագրությունները: Եթե գուռ է ար. առաջարի, որ է յօնուն ար. Սուրբ զատրաչ, չմից արդեւոց Բորսիս, միջաւակ իր և իր զարժի ՚ի թիվը 228 (1368): Ս. Քջիկանց. Ճամփակածորդամին ք Ենասաւե..., Վեհանի, 1368, էջ 242»

զարդարանդակներում կան պատահական, բոլորովին առանձին դիտվող հաստվածներ, որոնք դուրս են դռան ընդհանուր ձևավորման ոճական միասնությունից: Առանձին կտորների մշակման մեջ մի փոքր չորորդուն կա: Նույն այս դռան օրինակով է առեղծվել մի ուրիշը, որի արձանագրության մեջ հիշատակվում է փոքրագրման 1871 թվականը («է յիշատակ վասն ամենի ի յույս հարդիր և ի թվի գործեալ ձեռամքը Ծննդոր շամի»: Մյուս փեղկի վրա «Կատարեցա դուռս տաճարի սրբուն Սարգսի զարաւրի, արդար արդեամքը ժողովրդի»):⁴⁷ XIX դարում դուրս տեղափոխվել է Շաքրին և Միքայել Արքական տեղերի ելենեցի, վերանորոգվել է, որի մասին դռան եզրին կա մի նոր արձանագրություն: Այժմ պահպանվում է Լենինգրադի պետական Էրիթուաժում:⁴⁸

1871 թ. պատրաստված դուրս Թենդոսիայում պահպանված փայտյա դուներից լավագույնն է, որի ձևավորումն արված է հրատակ մտածողությամբ և արևելյան ինքնատիպ խառնվածքով: Հաստ ու կարծր կաղնու երկու համաստարաշատի հատվածների բաժանված տարածությունը Ծննդորշամ վարպետի ստեղծագործական հմտության շնորհիվ ծածկվել է երերաջափական զարդարանդակներում, որոնք հավաքվելով իրար շուրջ, յուրաքանչյուր դռան վրա կազմում են երերական ոճավորված խաչածն հատվածներ՝ խիստ ընդգծված երիզներով: Սրանց մեջ տեղափորկած են դորագոտույթ, իրար ձովված բուական տարրեր ձևերի փորագիր զարդարանդակներ: Զարդարանդակի այս ձևն ըստ երևույթին ընդունված է եղել Ղրիմում: Եթե, իրոք, դուները թիրված են Անդից, ուրեմն Անդի վարպետների գեղարվեստական մտածությունը համապատասխանել է Ղրիմի հայ հասարակության ճաշակին, որտեղ հայկական ու արևելյանը հանդիս են եղել իրար խիստ զուգորդված: Ուշագրավ է, որ ճիշտ նույն զարդարանդակը, նույն կատուցվածքով, խաչերի ու ականթների տերևների տարր-

⁴⁷ Էռքի աւելաց, էջ 331: Այս գոների ժամանքը բույզուն է ևս Խր. Կոչուկ-Խոանեսօն, Տարինեա արմանական ու տարշական բարօնություններու մեջ առաջատար է պատճենագույն գործականությունը: Այս գործականությունը պահպանված է Տարածաշատ առաջատար գործականություններու մեջ:

⁴⁸ А. Л. Якобсон, Армянская средневековая архитектура к Крыму. «Византийский временные», М.—Л., 1956, т. VIII. Գանձը վշառաված է՝ Վ. Ֆրեմելյան, Դժմիք Հայկական գուցության պատճենները, Եր., 1964: Առանձին հայկական գործականությունը պահպանված է՝ Վ. Ֆրեմելյան, Հայկական գործականությունները, Եր., 1968, № 11:

տեսակների նոյն գուղորդումով 1355 թ. պատրաստվել է մեկ այլ դուռ՝ Երուսաղեմի սր. Հակոբյանց տաճարի ներսի համար։ Արևելացն Զոն Կարսունը, երկար տարիներ պրատումներ կատարելով Երուսաղեմի սր. Հակոբյանց վանքում և ոտումնասիրելով այնուև պահպանվող կիրառական արվեստի նմուշները, հաստու ուսումնասիրության հոյոյ է դարձրել նաև վերոնիշյալ դրու⁴⁴։ Անդրադանալով դուս կառուցվածքին, նկարագրելով զարդարանդակները (բուսական զարդանախաչը) մեջ երկարաձիգ տեղադրված շորս շարք խաչեր՝⁴⁵ ճշտում է նաև դուս վերևում երկը շարքով տեղադրված նսցերն արձանագրությունները⁴⁶։ Պարզ է դատում, որ դրու կառուցվել է 1355 թ., Հովհաննեսի հիշատակին, եռա որդիների կողմից։ Կարևոր Զ. Կարսունի նպաստազումներն են. դրու կարող է բնրված լինել Երուսաղեմ, թերևս, Իրանց, որտեղ ստեղծված ինեցն սայիկների մեջ (Քաշան, XV դ.) մեծ ազերս ունեն այս զարդանախաչները։ Կարելի է ենթադրել, որ դոների այս խումբը դուրս է ենթ նոյն արվեստանոցից կամ ունեցել է բնշնանոր մի նախօրինակ⁴⁷ և կապվում է բուն Հայուստանում զարգացած արվեստի, մասնավորապես՝ փայտի գեղարվեստական փորագրության մեջ։

* * *

Փայտի գեղարվեստական փորագրության տեխնիկայով արված ստեղծագործությունների մյուս խումբը գրակալներ են։ Աշխարհու մեկ տարածված, կիրառական ճշանակություն ունեցող, սակայն տեղական ճաշակով ո գեղարվեստական ընկալումներով ձևավորված միջնադարյան արվեստում զգալի տեղ գրավող այդ իրերը Բայ իրականության մեջ և լայն տարածում են ունեցել։ Գրակալն առաջին ներքին կանկարասի է, հաստու հարմա-

⁴⁴ Զ. Կարսունը իր ուսումնամիջության արվեստերի մասին գիտուց 1978 թ. Հայ արժնանի ներքուած միջուղյամբ Ա. սիրացիսանուն ճառագիր, Բենա ձեռք ո ար Աշոմ կաֆեզրաւահու սօնօր Ե. Առա և Կերոսանա. Եր, 1978.

⁴⁵ Զայ վեպին գրա. տեղան զան Սուրբ Տամարի, որ է բանակ սուրբ Պավլուս Մեծայ զնագու 2. Այ վեպին գրա. «Սա յիշտուի անշեշին Ծաղկազայի ծուսնելոյ և որու թէ և Միջոց և այ թէին ԳԵ» (205-1255).

⁴⁶ Զ. Հավատան առաջին անդրագույքը այս զան գեղարվեստական արժանիքներին, վկրծուած արծանապատճեն այս զան գեղարվեստական արժանիքներին, գուս պատուառուութ 1871 թ. Համարելով (91); Դ. Հոկտեմբրին, Մայր արքանի պատճենը Օթուացներ գանձեց : «Պայտաց տարրացիք, 1950».

բանքով ատեղծված բարձրություն, որի վրա հարմարեցվում է ձևագիրը կամ գիրը:

Վաղ շրջանի գրակալ պետք է համարել Անիում ատեղծված խաչով և երկու աղավնիներով ձևավորված հարթություն ունեցող գրակալը⁴⁷: Գրակալի ընդհանուր կառուցվածքը, նրա ներ ու երկար ձևը, ըստունկած շափերից ավելի բարձր լինելը, ձևավորման բացադրիկ ինքնատիպությունը ընորոշում են այս գրակալի առանձնահատկությունները, որոնք և հաստատում են նրա ավելի հին ծագումը: Դա կարելի է հիմնավորել նաև գրակալի ցածր մասում տեղափորված զարդանախշերի պարզությամբ, որտեղ կարևոր փորված կետերից կազմված խաչանման պարզ խմբերն են: Դրա վկայությունն են նաև գրակալի վերի մասի տախտակիների վրա վորագրված եռանիստ խորանները, հատակ, անպանույն խաչը, ինչպես նաև սրանցից վեր տեղափորված աղավնիները (հիշենք, որ այսօրինակ աղավնիներ հանդիպում են Սևանի խորակների վրա): Վերջիններս կտուցներով իրար են կպած, որոնց ոճավորված եզրագծերի ալիքանեկ կտրվածքից ատեղծվում է խորականման անցում: Վարպետը գրակալին նայում է որպես պատ խորակի և դեռևս չունի իր հետնորդների մտածողության գեղարթեստական ինքնատիպության ձգումը: Փայտի գեղարթեստական վորագրության մեջ նրա համար կարևոր ընդհանուր հարթության համառումն է, ողջ տարածության ֆակտորայի մշակումը, որին նա համում է պատկերվածի ծավալների կետային փորագրման շնորհիվ: Դա հնարավորություն է տալիս կադեռ մուգ շագանակագույն մնակերևսի վրա ամենաճիշտ ոիրմ ստեղծել:

Դահսանված օրինակները հիմնականում ծագում են Անիից: Կան նաև Անիից Նոր Նախիջևան տարած հմուշներ: Գրակալներն ունեն արձանագրություններ, իսկ երեսն նաև՝ կատարման թվական: Թվագրված ամենահինը 1164 թ. գրակալն է: Այն ունի զուսպ, խիստ զարդարանակ, մանրատար արձանագրություն⁴⁸, մի փոքր ծանրանիստ է, իսկ աշխատանքի գեղարթեստական

⁴⁷ «Ի թիվը Հյուրց Ամբ Տիեր Ասրդուն յիշ յել յ յիշ ի Ծրբություն Յուժում, զրուեալ առք վրա»: «Ճիշտառն է ի զատ և յուրի Առ յայշ յ յ լուց (1164 թ.) նվզենին Մաշհան», եզզ. աշխ., էջ 60:

⁴⁸ Արձանագրությունն է: «Ճիշտառն է ույսայ բժուխ Դրբագրիք և ձեմպացքն յ... շինելով ի թիվը Հյուրց Ձմմ (1222), Գ. Հովհաննես, հայոց արքաք կամ Պառշակը հայց պատմությունն էլք, Մասն Ա, Վաղուցապատ, 1928, էջ 162:

կողմը հիշեցնում է քարի փորագրության արվեստի սկզբունքները:

Ծամանակի ընթացքում պարզ մտածված գրակալմերի գարդարանդակին փոխարիժները եկավ առավել կոտ, որոշ առումով նաև դաստիան դարձած կոմպոզիցիան:

1272 թ. պատրաստված գրակալն ունի բավականին խիստ կառուցվածք: Գրակալի ցածի մասի նարթության նամար վարպետը ընտրում է Անիի ճարտարապետական դեկորում ընդունված գարդարանդակի մի մոտիվ, որը գեղարվեստական կերպավորում է ատանում առավելապես քարի մշակման սկզբունքներով: Բարձրագույն առնվոր է խիստ ընդգծված բառանձյունի շրջանակի մեջ: Ռշագրավ է նատկապես գրակալի վերևի մասը: Նրա երկու փեղկերի դրսի հիստերի կենտրոնական մասում հարթաքանակին ընորոշ թերթությամբ նզրագծված են խաչեր, ցածում փորրիկ վարդակներ: Մասցած ողջ տարածությունը ծաղիկների և նուան նշունքների գարդարանդակներ են հանդիսավոր խիստ կոլորիտով: Հարթությունը ցածից եզրափակելու են լայն թաթերը և աղյօնականորեն տարածած, իսկ առաջինները նաև բարձր պահած առյուծները: Կարևոր է դարձել հավերժության խորհրդանշից տեղադրումը կոմպոզիցիայի վերին մասում, որն այսուղ ունի բացադրություն: զրի, գրականության, իմացության հասկացությունների հավերժության հետ կապված խորհրդանշից:

Եթե փայտյա դրսերի արվեստում պարզորոշ առկա է քարի փորագրության և, նատկապես, խաչքարերի արվեստի առանձնահատուկ ազդեցությունը, ապս: Անիի գրակալմերին ընորոշ է նըրանց նարթությունների մշակման բոլորովին այլ որակ: Դրակալմերի հարթությունները հիշեցնում են մետադի դրվագման արվեստը, նրանց ընորոշ «տարածված» ձևերը: Գրակալմերի վրա փորագրված առյուծներն ու գարդարանդակները իրենց ծավալներով, իրենց «հուսուն» եզրերով չեն անշատվում ֆոնի նարթություններց:

1272 թ. գրակալի համար ընտրելով մեկ «պոմե», վարպետը նույնությամբ այն կրկնում է մյուս կողմում, փոխելով միայն առ-

⁴⁹ Հայ բրականաթյան մէջ Էնց և Խան ցումք գրակալմեր, նույնած ընթացքներ Համար: Աչ մի որինակ չի գրանցանքէ: Գ. Անզուն, Զիրը և ապացության արվեստը թր., 1945. էջ 28:

լուծի քայլի ուղղությունը: Փորագրիչը յուրովի կրկնում է նիմ մոտիվները, քանի որ խաչով և ծառով աղոյութիւնավորումը հնուց տարածված մոտիվ է Արևելքի արվեստում:

Հայաստանի պատմության պետական բանագրանում պահպանվում են երկու այլ գրակալարեր, որոնք նար և նման են Անիի վերոնիշչալ գրակալին, կրկնում են նրա կոմպոզիցիան, մեկն ավելի վարպետորնն (№ 171), մյուսը՝ ավելի պարզունակ, առանց առաջին օրինակների նրագեղ գծանկարի ու կոմպոզիցիայի կուռ կառուցվածքի, մտածված նամամասների պահպանման (№ 105):⁵⁰ Վերջինին նմանությունը 1272 թ. Անիի գրակալի նետ նիմք է ճառայել նմասադրելու, որ սա ևս Անիից է թերվել⁵¹:

Զարդարանդակային արվեստի պատրինակ սույ պահպանված աշխատանքների ֆոնի վրա նատուկ արժեքավորում ունի նշանավոր Հավուց Թաոի Ամենափրկիչը, որը ներկայացնում է «Խաչից իջնեցման» տեսարանը: Այն բացատիկ է ոչ միայն իր վաղմանությամբ (IX—X դարեր), այլև՝ գեղարվեստական արժանիքներով (Էջմիածնի մայր տաճարի բանգարան):

1768թ. Սիմեոն կառողիկոսի կողմից կազմած Էջմիածնի վանքի գույքի ցուցակում նշված է. «Ամենափրկիչն, որոյ պահպան է փայտեա: Եւ ունի ընդ իր ա. արծաթեա փոքր սի նշան զանձնիրով, հանդերձ մահրամայիր»⁵²:

Այս պահպանը չի պահպանվել: Ներկա պահպանը ունի կատարման 1778 թ.: «Պահպանի արտաքին ձևավորման մեջ կարևորագույն տեղ է հատկացված ամենարանիչներին, իսկ ներսի կողմից փեղլիքի կոմպոզիցիոն կենտրոնները են կազմում «Խաչելության» և «Ավետման» տեսարանները: Ոճով և գեղարվեստական կերպավորման բնույթով պահպանի նկարներն ու զարդանաշները թելադրված են Էջմիածնի տաճարի ընդհանուր ձևավորման մոտադողությամբ և, հավանաբար, կատարված տաճարն այդ տարիներին նկարազարդող Հովհաննեան Հովհանքամյանի

⁵⁰ № 105 պրոկաչի արձանագրությունն է. «Արտուրի որդի տիւրէլը Անհայքին ընչ լույսով է սիւրյը Կարսուաւու: № 171 գրակալի արձանագրությունն պահպանվել է միայն մեկ հատված, «թ վէլիյ Հ լույս» Թաթէս (1573):

⁵¹ Անդրեաս Մաքրացին, եղիւ, այսու, էլ ըշ,

⁵² Պատեղին Հավակիյան. Համար Թաթէ Անհայքիչը և Խոյսիան հուշարձաններ Հայ արքեամբ մեջ: Երևանը, 1937:

(1730-ական թթ.—1801/2) նախանձարով ու դեկապարությամբ:

Հավուց Թափի «Խաչից իշեցում» քարձրաքանդակը ժամանակի ընթացքում վնասվել է: Խճանին ճիշտ նկատում է Գ. Հովսեփյանը, այն հարմաքեցվել է որիշ փայտի հարթոթյան մեջ, որից հատկապես տուժել են խաչի նորիզոնական թևերը: Ավելին: Խաչի ցածում պատկանված եղուստը վլայում է, որ այն պատվանդան է ունեցել և դրա վրա ամրացված է եղել որպես առանձին աշխատանք:

«Խաչից իշեցում» քարձրաքանդակի մասին բազմաթիվ պատմական հիշատակություններ և արձանագրություններ կան, որոնց մասնամասն վերուժությամբ է նվիրված Գ. Հովսեփյանի արծերավոր աշխատությունը³³:

Գ. Հովսեփյանը, իրեն հասուն գիտական բարեխոնությամբ ու բանիմացությամբ, քննության է առնում պատմական հիշատակարանները, սրբանկարչական մասնականները, այն համեմատում է ժամանակի հայ և օտար մասրանկարչական, բանդակագործական ու համանանան սրբապատկերային օրինակների մեջ և հանգույ այն եղբակացության, որ այս աշխատանքի նախատիպը ծագել կարող է Ը դարից հետո՝ Թ—Ծ դարերում: ԾԱ. դարից արդեն ունենք Գրիգոր Մագիստրոսի արձանագրության մեջ այս «որ ի փայտին պատկերի» հիշատակությունը³⁴:

Հավուց Թափի Ամենափերկիշի սյումեն Խաչից իշեցումն է, որի կենտրոնական մասը գրափում է Հշուսո՛ երկար, գանգոր մազերով, փակ աչքերով խաչազարդ լուսապակով: Մարմինն ավանդաբար չի կախված ցած, այլ կանգնեցված է պատվանդացի վրա: Նրան խաչից իշեցնող Հովսեփին ու Նիկողոսոսը երկար կապաներով են, որոնք ենթայացված են բազմաթիվ ծալքերով: Նրանց գլուխները այնքան են թերված, որ նորիզոնական դիրք են ստացել: Խճանին այս մասրամասները, նոյնպես և քարձրաքանդակի ստեղծման ընդհանուր մտածողությունը աշխատանքը մոտեցնում են գործական բանդակագործությանը:

Քարձրաքանդակը փայտի փորագրությանը բնորոշ մշակույթանին: Այն ծալքերում ելուզված է փորագրված կլոր նատիկներով, որոնք ուղերձական աշխատանք են նիշեցնում: Խաչի նոյ-

³³ Խոյե անգամ:

³⁴ Խոյե անգամ, էջ 52.

նատիւա մշակման նանդիպում ևնը Աղքամարի եկեղեցու արևել-
յան սպառի բարձրաբանդակներում⁵⁵:

Հավուց Թաղի ամենափրկիչի խաչերի վրա փորագրված
«Բատիկների», նագուստների ծաղքերի և մազերի, աղավնու փե-
տուրների մշակման ու մեկնարանման վրա նենվելով, Գ. Հով-
սեփիանը ենթադրում է, որ այս աշխատանքն ունեցել է մետաղ-
բա նախատիւ:

Դա շատ հավանական է, եթե նկատի ունենանք բարձրա-
բանդակի նիրավի մանրակրկիստ մշակումը, ողջ նարբության փո-
րագրման ծանրաբեռնվածությունը, բազմաթիվ մանրամասների
առկարությունը և, ամենակարևորը՝ փայտի փորագրությունն ունի-
կառարման խիստ շրջանակներ, որտեղ նկատի են առնվում փո-
րագրման մետ կապված մի շաբք առանձնահատկություններ՝
փայտի ֆակտորան, նրա ներքին կազմությունը, արտահայտ-
չականության ննարափորտությունները: Տվյալ դեպքում այն իր-
ատարող վարպետը մի փոքր մեռու է այս սկզբունքների պահպա-
նումից:

ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XVI ԳԱՐԻՑ ՃԵՏԾ

XVI—XVIII դարերում փայտի գեղարվեստական փորագրու-
թյան նայ վարպետները գերազանցապես ստեղծագործել են գաղ-
թօշակներում (Նոր Չուղա, Հալեա, Սուլվա, Լվով, Ղրիմ և այ-
լուն), անդրադարձնելով ոչ միայն ազգային կիրառական արվես-
տի այդ ճյուղի զարգացմանը բնորոշ գծերը, այլև տարրեր եր-
կրուների ու տարրեր միշավայրերի մետ ունեցած աղերսներն ու
ազդեցությունները:

55 Փայտի փորագրած խաչերներ անսպառն են հայոց գաղեա-
կներներ վրա, որոնց ավանդության անսպառն ունի ժակարտական մեկնարանում և ար-
շան է բազմակրցված ժայռներում (Հայուսանի պատմության պետական թանգարան, Երեա-
նի ժայռի թանգարան): Փայտի խաչեր նավահարար գործիքն են ունեցել Հայկական հեղե-
ցիւրում. Մի որինէ պահպանելու է հզմանի առնարի թանգարանում (փայտ Ա 20). որը
XIII դարի է, նորք սահմանի փորագրաթանը, ամրացված ժեսուզոս սալիկի, որի վրա պրա-
ված է Խաչեաթյան պատկերը: Փայտը Հայուսանի մերհակաթյունն այսուհետ է Հա-
յուսացացված է բակերթեց փոքր բարերը (Հայրարիս, առասի) և ունի Հայուսացար, փո-
քր շափերի անձնանի վարպետները ևն հաշումն փայտի համեստ արտաքինի և երս մի-
քանակ շարպանյան հետ

Այդպիսիք են, օրինակ, Ղրիմի ավելի ուշ շրջանի փորագիր փայտի նմուշները, որոնք բնորագրվում են արվեստի համեմատաբար ցածր մակարդակով և էկլեկտիզմի տարրերով։ Այդպիսին են Եվդոկիայի և Հովհաննի—Աննայի վանքի երթևմնի տաճարի դռները, որոնք թեև վերագրվում են XV դ. վերջին և թվագրված են 1479 թ., բայց արդեն սկզբնավորում են ուշ շրջանին բնորոշ գծերն ու առանձնահատկությունները։

Երկինշխանի փակույա այս դրույ ստեղծված է երենոսի փայտի իրար ագուցված մանր կտորներից։ Առանձին հատվածների, ուռուցիկ տերևներից կազմված խաչերի կամ վեցանկյուն աստերի ու վարդակների հատակ փորագրությունները ցուցադրում են այն ստեղծագործողի որոշակի կարողությունները։ Միաժամանակ, վարդետը շի կարողացել գտնել այդ հատվածների միասնական կապը, որի պատճառով նրանք դիտվում են առանձնացված։ Դուռն ունի արձանագրություն, ըստ որի այն պատրաստվել է 1479 թ. Հակոբ վարդապետ Երուաղենցու կողմից⁵⁶։

Հին Ղրիմից (Կարասու—Բազարից) պահպանվել են փոյտն դուներ (Լեհինգրադ, Պետական Էրմիտաժ), կատարված 1572 թ.։ Սրանց վարդետը, պահպանվող տեղական փորագրության արվեստում լայն տարածում ստացած ոճավորված խաչերի ուրվագծերը, լուրաքանչյուր փեղկերի վրա տեղափորում է բարձր փորվածքով արված խաչերի եռագիծ շրջանակներ, որոնք միաժամանակ ստեղծում են ոթանկյուն տարածքներ։ Սրանց դրսի ու ներսի ողջ հարթությունները փորագրում է նրանիցու ժանեկան բուսական զարդարանշակալով, որտեղ զգալի տեղ է տրվում ականթի տերևներ, նրա ոլորապտույտ, բարդ հյուսվածքներ կազմող պածայր զարդարանիշներ։ Սրանք հիշեցնում են գործային նկարչության մեջ լայն տարածում ստացած լուսանցքարդերը։ Խորը փորվածքը, ինչպես նաև բարձրաքանակի նոր ու

56 Արձանագրությունն է. «Ծ թափե ԶիԾ (1479) հազմեցած գուստ որ Տաճարիս, յիշտուակ Տ. Դրիգորիս արքեպիսկոպոսի և Տ. Կարասու կոմբինիոնի հակուցելոյն ի Թրիտոն, որ եղեւ պատճառ շինութիւն առար տաճարիս և այլ ամենաքի երախտաւորաց հարց պահ և միաբանից և աշխատաւթամբ... ձեռամբ տնօրժական ճակիր վարդապետի երախտաւորաց շինութիւն...»։ Տերքու Պալման. Հայ վանակաց ի Թուրքիա Ա. Ճամ, Կադիր, 1514, էջ 131։ Արցկ Ազգային թանգարան, Գանձամբիք նվազելու հայոց Պաճիր, 1952, և Ակինյան, հագախյայի հինգամյաց զուտեւ «Հանգիս աւասրդաց», 1861, Վրձնիկ, Ա. 75, էջ 363—364։ Հրապարակում է նաև զան լուսանկացք, որը ստուգել է հեղինակաց 1911 թ.։

նորք երիզը աշխատացնում են փոնը, նրա «առվերու» տարածությունները, որոնց վրա առավել ընդգծվում է հիմնական զարդարութիվը: Դուռ երիզի զարդարանշակը նույնությամբ կրկնում է 1371 թ. փայտն դրան զարդարութիվը: Դուռ գեղարվեստական ամրողացմանը խանգարում է արձանագրության հասովածի անշուր և անմշակ կառուցվածքը, տառերի անհավասար գծային փորագրությունը: Պետք է ներադրել, որ ինչ-ինչ պատճառներով վարպետը չի ավարտել իր աշխատանքը: Ուշագրավ է, որ փեղկերի հիմնական մասը վարպետն առանձին է փորագրել ու տեղադրել շրջանակի մեջ: Փեղկերի ու շրջանակի որոշ մասերի հավելյանների անհամապատասխանությունը, զարդարանշերի ուրշակի ոճական տարրերությունն ու նրանց միասնականության բացակայությունը, ինչպես նաև շրջանակի կոսիտ փորվածքը, հիմք են տալիս ներադրելու, որ դրանք տարրեր դրսների հատվածներ են, հետագայում իրար ենաւ հավաքված⁵⁷:

Նույն խմբին է պատկանում Կրիմից Նոր Նախիջևան տեղափոխված փայտն դրան թեկորը (Եղել է Գրիգոր Լուսավորչի եկեղեցու խորանում)⁵⁸: Նոյն արժեքավորությունն ունեն մին Ղրիմի (Սուրբաթի) մոտ և Խաչ վանքի տաճարի դրսները, որոնք ըստ Վ. Սմիռնովի «բավականին կոսիտ աշխատանք են և չեն ընորոշվում ոչ աշխատանքի մաքրությամբ, ոչ ննությամբ»⁵⁹:

1614 թ. Տարևում պատրաստված փայտն դրան կոմպոզիցիայում ավանդները պահպանվում են ինչպես հյուպահքների զարդարանշակների վերարտադրման, նույնպես և փորվածքի նորագեղության ու հատակության հարցերում⁶⁰:

Այս դրան վարպետը երկու հավասար մասերի է բաժանում կենտրոնական կոմպոզիցիան, որից մնանում է ցածի վարդակը

⁵⁷ Թեղուժած օր. Մարդիկ հեղեցու գումարից մեջ ոնք այս արձանագրությունը, «Երաները կիր Աւերսին յիշաւով իր և մեջոց խրցու» Մարտ փեղիք վրա. «Այս դրան օրոյ Արգոսի զարագարքի նույն Ա. Ֆելիխոսց. Եղ. այլու. էջ 349:

⁵⁸ Այս Հայուսանի պատմություն պետական թանգարանում:

⁵⁹ В. Смирнова, Археологическая экспедиция в Крым летом 1886 года.—«Записки Восточного отделения Императорского русского археологического общества». Т. I, вып. IV, СПб., 1887. №овк. Սուխոնն, Ղրիմի Խոջը Խաչ գանքը: Ս. Պատերությ. 1891. էջ 11—12:

⁶⁰ Այ գողդի անկրունու փորացքներ է. «Բնիք մեջու 182×210, Հայուսանի պատմություն պետական թանգարան:

և փոքր տարածութուն է մնում վերևում տեղավորներից խաչի համար: Կենտրոնական խաչի երկու թևերի տակ վարպետը տեղավորում է երկու փոքր խաչեր և դրանք առնում կամարաձև շղթանակների մեջ: Կոմպոզիցիայի պայմանի ծանրաբեռնվածությունն ու ինչ-որ մի տեղ արտահայտվող խստությունը թելադրված է նաև XIII դարի նայ քանդակագործության անկում ապրող առանձնահատկություններից:

Տաքի վաճրում պահպանված երկու դոներն իրարից քաժանում է մոտ 350 տարի, սակայն պահպանված երկու նմուշներն են ունեն մտածողության միասնություն, գեղարվեստական արտահայտչանության հնարների նույնություն: Նրանցից յորպահանջուրը կապված է իր ստեղծման ժամանակի և ավանդների հետ: Մեկը միջնադարյան նայ արվեստի ծաղկման ժամանակաշրջանի արտահայտությունն է, մյուսը՝ անկման: Ծառ նավանական է փայտի գեղարվեստական փորագրության տեղական դպրոցի գոյրթյունը:

Գեղարվեստական ընտիր փորագրության դոներ է ունեցել Ագուլյան և Թովմա առաջյայի վանքի եկեղեցին: Արևմտյան դուռ վրա քանդակված է եղել խաչը ձեռքին Քրիստոսը, որի կողը շոշափում է Թովմա առայլալը: Դուռն եղերին, առանձին հատվածներով քանդակված են եղել Աստվածամայրը, Մագթաղինեն, Աստված, Լուսինը և ունեցել են վիրատվության հիշատակությունն, ըստ որի դուռը պատրաստվել է 1694 թ.⁶¹:

Նոր Զուղայի եկեղեցիների դոներում գերիշխողը պարսկական փորագրական արվեստի ազդեցությունն է: Լավագույններից է Աստվածամոր եկեղեցու հարավային դուռը, որի երկու փեղկերի ողջ տարածում, առանձին քառանկյունների մեջ, առանց զծանկարի ու ձևերի համաչափությունների պահպանմամբ, իրկնում է խլամական արվեստում լայն տարածում ստացած ստաղմականությունների ոճավորված որվագիծը: Նոր Զուղայի եկեղեցիների դոները, որոնք պատրաստվել են XVII դ. վերջում և XVIII դ. առաջին կեսում, մի փոքր ծանրանիստ են և մեռու արվեստի մյուս նյուղերի ընտիր գեղարվեստականությունից:

Նոր Զուղայի փայտի գեղարվեստական փորագրության ոճական արձագանքը տեսնում ենք Թաղեկի վանքում: Տաճարի նյու-

⁶¹ Ա. Խաչյան, Դադին. Թիֆլիս (առանց տարեթիվ), էջ 70.

սիսային մուտքի դռան կոմպոզիցիան կատուցված է աստղաձև և շրջանակաձև տարրերից: Նշանակալից դեր են խաղում հավասարաչափ դասավորված մետաղյա նոված բութակները, որոնց գնդիկներից ճառագայթաձև դեպի համբադարձ անվյունն են գտնուողի և ողորկ փայտիկները, իսկ սրանց շորժը էլ տեղավորված են մանր շրջանակներ:

Թաղեի տաճարի դրուն ունի հստակ ընդգծված կոմպոզիցիա՝ եզրերում և մեջտևնում տեղավորված շրջանակներ, որոնց վերևում կատարման մասին արձանագրությունն է⁶²: Դրուն ուշագրավ է փորագրման տեխնիկայի տեսակնուից: Առանձին մասը կտրները հավաքված և ամրացված են որիշ տախտակի վրա (ինտարսիայի տեխնիկայով): Լուսատվերների արտացոլումներն ու փայտի դեղին երանգը գունային ինքնատիպ գեղեցկություն են ստեղծում: (Նոյն տեխնիկայով արված դռան հանդիպում ենք Մելիքիում XVII դ.):

Բավականին մոնումենտալ տեսք ունի սր. Ստեփանոս Նախավայի վանքի տաճարի գլխավոր մուտքի փայտյա դուռը (1680 թ.): Այստեղ արդեն խաչը կորցնում է իր առաջնամեջը նշանակությունը և ծովվելով բազմամիաս երկրաշափական տարատեսակ զարդանախչերին, հանդեւ է գալիս որպես ընդհանուր տարածք կազմող տարր: Գծերի ու զարդանախչերի հստակ համամասնությունը, երկաթյա գնդաձև բութակների առատությունը շրելություն և փայլ են տալիս դռան ընդհանուր տարածքին⁶³: Ե՛վ Թաղեի, և Ստեփանոս Նախավայի վանքի եկեղեցիների դրուների հորինվածքները գեղարվեստական մտածողությամբ շաղկապված են սնֆյան նրանի փայտի փորագրության նույնօրինակ ստեղծագործություններին:

Փայտի փորագրությամբ արված դռների արվեստը XVIII դարում անկում է ապրում: Հիշատակություններ կան, որ փայտի փորագրության արվեստը որոշակի աշխատություն է ապրում

⁶² ոչ շշշատակ է գուռա սուրբ... սրբազնե թ՛ւշ:

⁶³ Արձանագրությունն է. «Ճիշճիշայույշի է գուռա ակսովելից խոճայի նիշի լողացույնն է կոյշիցայցն Մարիամին և Մայրացայրին» տիկ և որոշի թիւյրթունին և ծեսոյշայույշ Մայրացայշ ուսոյշ յուն և Զիշակինին... եղորն նազայրին և որդոց ոսքին, Տերութիւնինին, Աշոտակինին, Մամուչին, Աղային, ելայլայտորին, նղիազարին և Ժիս Խաչարին և թվերին Եղիշարեմին թվերին թձերի թիւյրային և պատուան, Բրանի Հարիսկան գունքերը: Թիւրան, 1871, էջ 32:

Կ. Պոլսում, սակայն քաղաքի տարբեր թաղամասներում պարբերաբար առաջացած հրդեմները ոչնչացրել են և այսօրինակ արժեքները: Կ. Պոլսի վարպետների գործերը տարվում էին այլ բաղդաբներ: Երուաղեմի սր. Հակոբյանց վանքի Պողոս և Պետրոս առաջապես հորանի ցածի մասում «կայ սուրբ Հջմիածնոյ դուռն, որ մեր Ստամբոլու մետ տարանք, մասնեւսի Ղանտիին շինածըն է, սիրուն գեղեցիկ տօղրամայ մին դուռն հանեցին և այս դուռը նորա տեղն դրին ըստահատով», — գրուն է Զիար Ծիերձի Ըլլու քահանան, 1711—1712 թվ. Կ. Պոլսից Երուաղեմ կատարած իր ճանապարհորդության օրագրության մեջ⁶⁴:

Փայտը որպես շինանյութ միշտ էլ օգտագործվել է հայկական ճարտարապետության և, հատկապես, ժողովրդական ճարտարապետության մեջ: Քանդակագործական մտածողությունը բնորոշ է փայտի փորագրության արվեստի բոլոր տեսակներին, բայց առավելապես այն գործերին, որոնք առնչվում են ճարտարապետությանը: Լայն տարածում են ունեցել այսուների սղոցակ՝ փորագրվածները, քանդակազարդ խարսխները, որոնցում, բուսական և երկրաշափական զարդարանակների կողքին, համովագում ենք նաև հավելմության խորհրդանշիչներ:

Ժողովրդական ճարտարապետության փայտն նմուշներ, կանույր և այլ կարգի փայտն իրեր հանդիպում են միջնադարյան մանրամասնարշության մեջ, որոնք հաստատում են նրանց լայն տարածումը կենցաղում: Կենցաղային իրերի և ճարտարապետական կառուցի առանձին հատվածների մշակումը խարսխված է եղել ինչպես տեղական, նույնպես և արևելյան երկրների (հատկապես Իրանի) մշակութային կյանքում լայն տեղ գրավող փայտի գեղարվեստական մշակման ավանդների վրա: Մինչև օրս էլ մեծ հարգանք են փայտում տների պատշաճմբների ժամակամյուս հարդարակերները, լուսամուտների ցանցերը, որոնք միշտ էլ լայն համարում են ունեցել արևելյան ժողովուրդների կենցաղում և արվեստում:

Լուսամուտների համար հայտառավաճ քառակուսի կամ պարած շրջանակների մեջ, զանազան զարդարանախշերի կանոնիկ սկզբունքով, տեղավորում էին տարբեր կորության և երկարության, բայց միասնական հաստությամբ նոյնված փայտն փոքրիկ

⁶⁴ «Հազմամբեց», Վճկաբէ, 1867, № 5, էջ 207.

հատվածներ, որոնք ցանցկեն տեսք էին տալիս հարթոթյանը։ Յուրաքանչյուր լուսամուտ ուներ իր կոմպոզիցիոն կառուցվածքը և դրանից բխող զարդանախաչը։ Ծրջանակների ընդհանուր տարածությունը երբեմն խաչաձև կենտրոնով բաժանվում էր չորս հավասար մասերի, որը հնարավորություն էր տալիս յուրաքանչյուր քառակուսի հատված իր ներքին բաժանել եռանկյունաձև, ապա՝ կլոր մասերի։ Այսօրինակ գործերի կոմպոզիցիան ընդգրկում էր զարդանախաչի հատուկ մի հատված, որ հաշորդաբար կրկնվում էր երկայնքային տարածքում։ Տեխնիկական առումով վարպետներն օգտագործում էին և հարթ տարածքներ, և՝ զարդարանդակների խորը մշակումներ, և՝ գրաֆիկական (գծային) տարածքներ։

Արմետավորական բարձր հմտությամբ կատարված լուսամուտների ցանցերի նմուշներ պահպանվել են Հայաստանի պատմության պետական և Երևան քաղաքի թանգարաններում։ Նրանք այժմ ել լայն տարածում ունեն Իրանում, Թուրքիայում, Եգիպտոսում և Սիրիայում։

Հետազայտում փայտի ցանցերի մեջ ներմուծվում է ապակին։ Սա արդեն փոխում է երանց բնույթը, քանի որ լուսամուտների համար պատրաստվող փայտյա ցանցերի մկրունքը ժխտում է ապակու օգտագործումը։ Ցանցերի փայտի յուրաքանչյուր հատված, իսկ երանց մուծված որոշակի լայնություն ունեն, ստվեր է գցում հանդիպակած փայտն երթօնի վրա։ Լուսամուտների անընդհանուր հատվագործություն են տալիս սենյակի ներսից տեսնել դորսը, իսկ դրսից նայողի համար սենյակում ոչինչ տեսանելի չէ։ Նոր Զուղայում, պարուսական օրինակների հիման վրա, պատրաստում էին ցանցեր, որոնց մեջ տեղապորտում էին փայլարի հատվածներ։ Հենց այսպիսի ցանցերն փայտյա ու փայլարն լուսամուտ եկատի ունեին Մուսլիմի Զինապարատում, երբ Բոգդան Սավանովին հանձնարարում էին (1676) թագածառնոց Պետրոսի սենյակներում ձևավորել լուսամուտը այնպէս, որպեսզի «⁵⁵ հայության շորում տալու լին»։

Այսպիսի հանձնարարություն Բ. Սավանովին տալու լինը

⁵⁵ Ив. Забелин, Домашний быт русских царей в XVI и XVII ст., М., 1915, ч. II, стр. 200, 637.

նիմքեր կային, քանի որ Նոր Չուղայում դա լայն տարածում ըստացած կիրառական արվեստի տեսակ էր, որի գեղեցիկ օրինակներից պահպանվել են մինչև մեր օրերը: Նրանց գարդանախաչն ու կոմպոզիցիան երբեք չեր կրկնվում:

Գեղեցիկ օրինակներից է Խոչա Պետրոսի ապարանքի պատշգամքի փայտյա դեկորատիվ ծածկը (Նոր Չուղա): Սա ազն ապարանքն է, որի ներսում, ինչպես նաև տան բաց պատշգամքում, պահպանվել են XVII—XVIII դարերի հայ գեղանկարչության բարձրարվեստ օրինակներ (մի մասի հեղինակը XVII դ. շնորհալի նկարիչ Մինասն է):

Խոչա Պետրոսենց ապարանքի պատշգամքի փայտյա ցանցկան մասնը պատահական չեն և ունեն իրենց ֆունկցիան ողջ կառուցի գեղարվեստական կերպարի մեջ:

Պատշգամքը հիշեցնում է պարսկական ճարտարապետության մեջ լայն տարածում ստացած այլվանը: Բայց կողմից նրա առաստաղը պահում են երկարաձիգ, վեցանիստ, վերևի մասում բանդակազարդ ստալակտիտներ կազմող սլացիկ փայտյա սյուները, որոնք հիշեցնում են Սպահանի Շեմել Սորուն և Ալի Ղափու պալատների փայտյա սյուները: Պատշգամքի երկու կողմերում, պարագն ցածր փորփածքների մեջ, գեղանկարչական թնամատիկ պատկերներ են տեղափորված, իսկ դիմացում դեպի սենյակները տանող գլխավոր մուտքն է: Մուտքը ևս պարագն կտրված ունի, որի ողջ ազատ տարածությունը լցված է փորրաշափ փայտյա շրջանակների զարդանախաչով: Ու այս ամբողջի վրա փայտի փոքր կտորների համադրությունից ստեղծված առաստաղի հարթությունն է: Այն բաժանված է երեք խոշոր մասերի: Կողքի հարթությունների երիգները հատվում են սյուների հետ: Սյուների միջև ընկած տարածությունը փայտի խճանկարային դասավորության հետաքրքիր օրինակ է, որը բաղկացած է վեց առանձին կոմպոզիցիաներից: Փայտիկների որոշակի դասավորությունից հրանք ստանում են շեղանկունածն, քառակուսի և ճառագայթածն կառուցվածք: Օրվա տարրեր ժամերի լուսավորության հետ փոքր կոմպոզիցիաները ստանում են արտանայուշականության որոշակի երանք: Առաստաղի ձևավորման նույնանան օրինակի հանդիպում ենք Մելլրու Մեծ թաղամասի տներից մեկում⁶: Խոչա Պետրոսենց ապարանքի պատշգամքի առաստա-

Հ. Պատուխյան, Մուսիքի ժաղացրական և արտաքայլական նորություններ, Երևան, 1977, էջ 161:

ի փայտն ձևավորումը վկայում է այն պատրաստող վարպետների ճաշակի, գործիմացության, հմտության մասին, արհեստը արվեստի մակարդակի բարձրացնելու նրանց կարողության մասին: Իսկ որ Նոր Չուղայում նյութն արվեստագետներ են եղել, վկայում են մի շարք տների փայտյա ձևավորումները, այդ թվում Աղանոր Տեր—Բարսեղյանի նիւ տոնը (պատերին պահպանվել են Ղաջարների շրջանի նոյակապ որմնանկարներ, նյութասիրության տեսարաններ, պարող ու նվազող աղջիկներ և այլն): Տան ճակատային մասը ամրողութին փայտյա գեղարվեստական ձևավորում ունի, որի մի մասը բարձրավել է, ցածինը՝ բոլորովին ոչ շացնել: Պահպանված նուտվածներում կարևոր զարդարանախը երկարաձիգ շրջանակների միջից ճառագայթաձև ցրվող փայտյա նուրբ գծիկներից ստեղծված կոմպոզիցիան է, որոնց իրար են միացնում նրանց միջից համամասն անցնող երիգները⁷⁷:

Որքան էլ տարրեր են Նոր Չուղայի փայտն ցանցերի զարդարանախը, որքան էլ վարպետները ձգտում են մեռանալ միօրինակությունից, բայց կա զարդարանախչի մի կառուցվածք, որը նիշեցնում է գորգի հարթություն, լայն տարածում ունի և դասական զարդարանախչի օրինակ է կիրառական արվեստի այս բնագավառում: Լուսամուտի շրջանակի հարթության կենտրոնական մասը կառուցվում է մեղրաճանճի փետակի կոմպոզիցիայի սկզբունքով, իսկ նզրամասերը՝ շորու փոքր տերևների կենտրոնացված զարդարանախչից, որոնք հաջորդաբար հավաքվում են մեկ շրջանակի շորջը: Այսուել գործ ունենք ժանյակի կառուցման սկզբունքի հետ, որտեղ յուրաքանչյուր գիծ փոքրաչափ կոմպոզիցիայի մի մասն է, միաժամանակ՝ հարևան նախշի ամրաժամանակի հատվածը: Այս տեսակի փայտյա ցանցերն «մոզայիկներ» պահպանվել են Նոր Չուղայի Գրիգոր Լուսավորչի եկեղեցում⁷⁸: Արվեստի առանձին գործեր լինելով, միաժամանակ, նրանք բն-

⁷⁷ Նոյն տիպի ցանցերն լուսամուտ պահպանվել է Մէջրու Փարք թագավորության ուժում: Խ. Պատրիարքական, Եղբ. աշխ., էջ 162: Դա արհեստակ արքեստում տեղ գտած զարգարանախչի տեսակ է, որի բաղադրիչն զեղցիկի որինակներ են ուսուցանելու իրացնությունը: Էտյունն և Կաշէրքի մշկիթներում: Տե՛ս՝ Queston Migeon, Manuel d'art musulman, 1, 1, 1927, Պատ. թ. 318 և այլն:

⁷⁸ Գրիգոր Լուսավորչի հեղացյալի կոտորչելք է 1713 կամ 1714 թթ.: Այդ ժամանակ են պատրաստվել նաև փայտյա լուսամցացանեցրել:

թևացնում և ինքնատիպ ձևավորում են տալիս նկեղեցու պատի միատարր հարթությանը:

Հայ Թ. Թորամանյանի, «պատուհանների լուսանցուց վանդակապատերը» լայն տարածում են ունեցել հայ իրականության մեջ²⁰: Հատկապես նշանակալից է Երևանի վարպետների գործունեությունը: Հայկական նախաճգի մուտքերի և պետական ունեցվածքի կառավարչության նախագահ Ի. Շոպենը 1829—1832 թթ. կազմում է Հայաստանի վարչատնտեսական նկարագրությունը (Կամերալու օպուսակե): որին կցում է նաև բազմաթիվ տեղեկություններ զանազան արհեստների վիճակի մասին: Նա հատուկ հիացական տողեր է նպիրում Երևանի ատաղձագործներին: «Երևանյան ատաղձագործների արվեստը հայշանակում է ասիական մեծ լուսամուտների պատրաստման մեջ: Այդ լուսամուտները կառուցված են ամենատարատեսակ և գեղեցիկ նախչերով հավաքված բազմաթիվ փոքր փայտիկներից, որոնք ունեն բազմագույն ապակիներ նագուցելու երիզներ: Նրանք կազմում են գեղեցիկ գծանկարներ, միշտ այնպիսին, որպիսին ներկայացվում են գեղադիտակներում»,—գրում է Ի. Շոպենը: Հայ նոյն նեղինակի տվյալների, ատաղձագործների թիվը Երևանի նախագում անցնում է 300-ից, որոնց գգալի մասը հայեր ենք²¹:

Գրակալներ պատրաստվել են նաև ուշ շրջանում:

Անիի նշանավոր գրակալների (1272 թ.) զարդարանդակների հար և նման օրինակն ունենք 1678 թ. Նոր Նախիջևանում պատրաստված գրակալի վրա: Այս գրակալի վարպետը չի կարողանում պահպանել կոմպոզիցիայի կառուցման տարրական սկզբունքները, անփոյթ պատկերված նավերժության նշանը դառնում է ծաղկի ճյուղի մի մաս, որը չոր և հասոտ կորածեր ունի: Փայտի փորագրման տեսանկյունից ևս գրակալի այս օրինակն արված է ոչ շատ հնմոտրեն: Բարձրարարանդակի ձևերը չունեն մշակման այն փափկությունը, ծավալների նրագեղության այն զգացումը, որոնք առկա են շատ ավելի վաղ արված օրինակներում: Զիա շարժման այն ոիթմն ու վեհությունը, որը բնորոշ է

²⁰ Թ. Թորամանյան, Երևան Հայկական նարտագագառության պատմության: Հայտ. 1, եր., 1942, էջ 144:

²¹ И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб, 1852, стр. 53—54.

Անիից հասած գրակալների գարդարանոյակներին: Որոշակի պարզությունն ու հասարակ մտածողությունը այս աշխատանքը հեռացնում են դասական խստությամբ արված գրակալների վարպետների գեղարվեստական նաև կացություններից⁷¹: Ծառ հավանական է, որ ինչպես այս, նույնպես և 1678 թ. գրակալը պատրաստվել են նույնանման նախմական օրինակներից, որը չի պահպանվել: Մեկ այլ գրակալ պահպանվել է Երևանի կամացում, որը ուշ շրջանի գործ լինելով նաև կերպ (1682), ունի հայուն կառուցվածք, որի շնորհիվ պարզորոշ ցուցադրվում է այն ստեղծող վարպետ Հակոբի փորագրման տեխնիկայի վարպետությունը, գարդարանդակի երանցները վերհիմնելու հրա հմտությունը, գարդարանդակ, որի պարզ մասնիկների գուգորդումը ստեղծում է բարդ հորինվածքները⁷²:

Փայտի գեղարվեստական փորագրությունից բացի նայ արվեստում որոշ շափով կիրառվել են և փայտի վրա նկարելու արվեստը, որը նայունի է եղել դեռևս մին ժամանակներում:

Փայտի վրա նկարելու արվեստը նայունի էր անցիներին: Մի բանի բնելորսներ նայտնաբերվել են ամրոցի այլասով տարրեր մասներում: Դրանք զանազան նշանակություն ունեցող նարուարապետական նատվածների մասն էին, որտեղ զարդարանդակներից զարդ նաև դիմումում ենք մարդկանց (թագավորական ընտանիքի անդամներ) պատկերումների: Ի. Օքբելին ենթադրում է, որ դրանք կարող են դուների բնելորսներ լինել⁷³: Դա շատ նաև վանական կարող է լինել, եթե նկատի ունենանք, որ արարական երկրություն (Հիշենք Անիի և արարական խալիֆաթի կապերը) և Իրանում (Ալի Ղափու, Շենել Սոթուն պարատների դուները) միմնականում նկարազարդվում էին ապարանքների դուները: Նույն տեխնիկայով արված շրեր դուների օրինակներ պահպանվել են Նոր Զուղաբի Ա. Տեր—Բարսեղյանի առանձնատանը: Դուների

71 Հետաքրքիր գրականից շռառեկար է անգարգութ Ա. Մանցականյանի գրքում: Ըստ Շայխ-Նաևի, գրականի մը փորագրված են պատշաճքամյան, հձևակերպի հեղող-գույքի խորհրդագրանիները: Գրականը Մերտուածածք է: Ա. Մանցականյան Հայկական գորդարձեաւը, Երևան, 1922, էջ 517:

72 Արձանագրություններ է. թ. «Երշատակ է առ Ֆեռիք ի բամբ գուռ որ Ֆերիք: Հ. Շակագին» գրականությամբ մակար արքան թվին մէկ (1682): Պ. Հավանիչյան, Մակ արքան արքանցին ծրագաղքն զարդիք, «Պարագար առքեփքը», Թիգրամ, 1950,

73 Ա. Օքբել, Հնագույն արքան առանձնատանը, Երևան, 1963, էջ 32.

Ըլքարազարդման հիմնական մոտիվը բուսական գարդանախճն է, որի տեսաբամի կամ առանձին ֆիգուրների ներմուծումով, որն ունի մանրանկարչական արվեստի զգայի ազդեցությունը: Հիմնական գունային գամման կարմիրն է, դեղինը ու կանաչի ճաշակով ներմուծմամբ:

Հայ իրականության մեջ փայտի բանդակագործական աշխատանքները լայն տարածում չեն ունեցել, իսկ եղածն էլ չի պահպանվել: Բարձրաքանակներում տարածված է եղել Խաչելության կամ Խաչից իշեցման քևման: Այսպիսի օրինակների հանդիպում ներ Նոր Չուղայի սր. Ներսեսի եկեղեցում (1721), որտեղ փայտի գուսայ մշակման ժողովի վրա շատ ավելի հնչեղ է գեղանկարչի գործը: Սա կաթոլիկ արվեստին բնորոշ «Խաչելության» տեսարան է, որի շատ ավելի կատարյալ օրինակը պահպանվել է Մոսկվայի Կրեմի Խաչելության եկեղեցում: Վերջինիս հեղինակը XVII դարի II կեսի Եշանավոր Ակարիչ ու կիրառական արվեստի վարպետ Բոգդան Սայքանովն է, որը Նոր Չուղայից 1666 թ. եկավ Մոսկվա, դարձավ Չինապալատի առաջնակարգ մկարիչներից մեկը, Ալքարազորդից պալատուներ ու եկեղեցիներ, պատրաստեց կիրառական արվեստի բազմաթիվ իրեն՝ կանկարասի, խաղալիքներ, սկրոտեններ, շախմատներ, դրոշներ, դաշտ իրեն և այլն: Նա ոուսական իրականության մեջ ներմուծեց «կերպարայ Ալքարչությունը» (ձեռքբերն ու դեմքը Ալքարվում էր լուղաներկով կամ տնմպերայով, իսկ մարմնի մնացած մասները ծածկվում էր ասեղնագործ կերպարով): Ռուս արվեստաբանները (Ա. Ռուպենսկի, Ի. Գրաբար, Ն. Մոլանա) արժեքավորել են Բ. Սայքանովի արվեստի դերն ու Եշանակությունը XVII դ. II կեսի ոուսական գեղանկարչության և կենցաղի շատ կողմների ձևավորման հարցում:

Բ. Սայքանովի «Խաչելություն» (1679) փայտի գեղարվեստական մշակման և գեղանկարչության սիմթեզի մի գեղեցիկ օրինակ է, նրա արվեստին լուրահատուկ ոնու ստեղծված մի աշխատանք, որը թերաշրված էր արվեստագետի ողջ գործունեությունից: Սայքանովի աշխատանքում Քրիստոսի ֆիգուրը տեղավորված է շորթեանի խաչի կենտրոնում: Նրա զյուի վերևում արձարքի ոսկեզօծ պատճեն է, կոնքին փաթարված դենքալիք «հոսում են» արյան շիթերը: Քրիստոսի ֆիգուրի ծավալների ունակ մշակումը, ձևերի մոդելավորումը, լուսատվերի հմուտ օգտագոր-

ծումը նեարավորություն և տալիս դիսողին զգալ խաչված մարտնի ծանրությունը, նրա ուսակ և, միաժամանակ, ոչ երկրաշին էությունը: Անշտշտ, աշխատանքը թերադրված էր ոռոսական սրբանկարչությունից, որը նոր մնանարանուն էր սուացել հայ նկարչի կողմից: Սալյանովի «Խաչելությունը» քանդակագործ գեղանկարչության սիմբոլի ինքնատիպ օրինակ է: Նվազանական չէ այս Սալյանովի արվեստում:

Հին ոռոսական արվեստի մասնագետ Ն. Ն. Պոմերանցը 1975 թ. Կրեմլի պատմատում հայուսարերեց «Գողգորա» գունազարդ բարձրարարանիակը, որը վերաքրնեց Բոգդան Սալյանովին: Աշխատանքի կոմպոզիցիան կրկնում է Անտվերպենի տաճարի խորանի «Նիզականարում» սրբանկարը, որի ներինաւուր ֆլամանդական նշանաւոր նկարիչ Պետր Պավու Ռուբենսն է (1577—1640): Փայտի փորագրության տեխնիկան այս աշխատանքում գուգորդված է ինկրուտացիային և գեղանկարչությանը: Օգուլելով Ռուբենսի աշխատանքի գրավյուրից, Բ. Սալյանովը կարողանում է փայտի փորագրման բարձր վարպետությունը գուգակցել գեղանկարչական կատարմանը, որից աշխատանքը ստանում է ուսակ պատկերումների պատրանը: Հատկապես բարձր կուտուրայով են արված բնապատկերը, Երոսադեմի ամրոցն ու տաճարը: Մասնագետները անսուրեկելիորեն Բ. Սալյանովին են վերագրում «Գողգորայի» վրա տեղ գտած մակագրությունները, վերապահորեն նրա ներինաւությունը տալով նաև ողջ աշխատանքը⁷⁴: Պետք է ենթադրել, որ Արևելքում յայն տարածում գրտած արվեստի այդ տեսակը Սալյանովի մոտ հարատացավ և վրոպական ազդեցություններով և սուացակ նոր որակ ու արտահայտչականություն:

Գեղանկարչությունը փայտի վրա, նրա նկարազարդումը մեծ տարածում ուներ հատկապես Միջնադար Արևելքի երկրներում: Նկարազարդվում էին սննդակների սուատադրությունները, պատերը, դռները, որտեղ հիմնականում օգտագործվում էր երկրաշափական ու բուսական զարդանախշը, դեկորատիվ գունային հատվածների համադրությունը: Նշանակալից է

⁷⁴ Н. А. Трояхтанова, Из истории художественных связей Армении и России в XVII—XVIII вв., Ер., 1978. Հայ արվեստի եվրոպակարգացության մեջ մեջազնության գործությունը: Խաղաղական գործությունը: Բազու Սալյանով, Եր., 1985:

այդ արվեստի «ժամանակույան դպրոցը», որի լավագույն նմուշները պահպանվել են նաև Հայեապում, Իրանում, իսկ մի ամրող սենյակ՝ Բեղլինի պետական թանգարանում: Արվեստի այդ տեսակը, ինչպես վկայակրոշում է Ա. Սյուրմելյանը, Հայեապում հայերի մենաշնորհն էր, որը սակայն գիտեին նաև արարեներն ու նույները⁷⁵:



Փայտի գեղարվեստական փորագրության հայեական արվեստում առանձնակի խումբ են կազմում նաև գամերն ու բազեայտությունները:

Գամերն ու գահավորակները ննուց հայոց հայոց պալատական կամուրջի ամբաժանելի մասն են կազմել: Ըստ Սօմարանգեղոսի, Տրդատ թագավորի հրամանով Հոփիսիմենին պալատ են քերում «ուսկիապատ գահաւորակս», որը «ազնիս, գեղեցիկս, փափուկս պայծառս» էր և այն տանում էին «սպասարք»⁷⁶: Բ. Առաքելյանը գտնում է, որ տարբեր տեսակի գամերն ու գամուրքները տարածված կամուրջ էին Հայաստանում և պատրաստվում էին շուկայությամբ⁷⁷:

Պահպանված ամենահին հայեական գամը Եշանավոր Օլմատն գտնն է (Մուսկվա, Կրեմլ, Զինապալատ):

1660 թ. Սպահանից Մուսկվա է այցելում նայ վաճառականների մի խումբ՝ ուստ թագավորի ննու առևտրական պայմանագիր կմերելու: Արևելյան հյուրագնացության չգրված օրենքներով, իսկը թի ղեկավարը՝ Նոր Չուղայի անվանի վաճառական Սահրադ Շահրիմանյանի որդի Զարարը, Ալեքսանդր Միհայլովիչ թագավորին մատուցում է բազմաթիվ նվերներ, որոնց շարքում ամենաշանակալիցը «Ալմատն գտնն» էր:

⁷⁵ Առանձագ Սյուրմելյան, Գառամութիւն Հայեափ Հայոց: Հ. 2. Հայեազ, 1940, էջ 710—712:

⁷⁶ Արարակելյան, Գառամութիւն Հայոց: Տիգրա, 1903, էջ 91—92:

⁷⁷ Բ. Առաքելյան, Հայեական պատկերաբանելու Խ—VII դարերում: Եր., 1949: Առելյան, ուրի թիուն նաև Հայեական գամերն իրենց կառոցքմերք և ձևագործություններք և ձևագործություններք (մշկիմերերու բարոյն համար անշատեալ հանուցք), որոնց երրագէտ փարուս վեցաշուանական փարագրությունն զավակցվում է ինքնառասպացին ու խաթամի արքեստին: Օրինակ, Խաչերի եկթ—նեց մշկիմեր (1408—1430, Տանգանի Վիկուարիս և Ալբրետ Բանգառան), Գառամութիւն Մայուսների մշկիմեր միջրաբերք և այլն:

Մոսկվայի նին ակտերի պետական պատմական արխիվում պահպանվել և «Ալմատէ գամի» բնութեան և գնահատման մասին մի շարք փաստաթղթեր⁷⁸, որոնցից պարզ է դատնում գամի հարատոթյան պատկերը: 897 տարրեր չափի ալմատներ, 1-289 մարգարիտ, ամերիտ, չափուղ, տպագիտն, հակինթ, իսկ 1830 հատ Նիշապորի նշանավոր փիրուզաներ ագուցված են ուկն և արծաթե սալիկների մեջ: Գամի հարդարանքում օգտագործվում են նաև ու թափիշ, կարմիր մետաքս, դեղին կերպան, զանազան բնուիր փայտատեակներ, այդ թվում՝ շինարենի ու նաճարենի: Ժամանակին նավլաւան կիրառական արվեստի այդ ինքնատիս ստեղծագործությունը գնահատվել է 22.589 ռուբլի⁷⁹:

Ալմատէ գամի ձևը, նրա կողուցվածքը շատ պարզ են: Դա պալատական բազկարողի հստակ մի ձև է, որը լայն տարածում ուներ XV—XVIII դդ. Արևելքի կիրառական արվեստում: Նույնանման գամի տարրերակներից են 1604 թ. Շահ Արքա առաջինի կողմից բորիս Գոդունովին նվիրած գամի, Միհայիլ Ֆյոդորովիշ թագավորի գամի (Մոսկվա, Կրկել, Զինապարատ), Խամայիլ I-ի ուկն ձուլած գամի (1514), Սուլյան Սելիմի սանդալն փայտից պատրաստված գամի (Երկուս Էլ Սուլամբուլի Թոփ—կապո թանգարան), նշանավոր «Թախտե թոռուզ», Նադիր շահի գամերը (Թեհրան, Գոլխոտանի պալատ) և այլն: Սրանք բոլորն ել կատարված են ուկու, արծաթի, փղոսկրի ու թանկարժեք քարերի վարպետ դրվագութեանու: Իր ինքնատիսությամբ սրանց կողքին արժանի տեղ ունի նաև Ալմատէ գամի:

Այն ստեղծող վարպետների համար (իսկ նրա վրա աշխատել են թագմարիկ մասնագետներ) առաջնամերթ նպատակ է եղած զարդանախչել բազկարողի բոլոր փայտյա հատվածները, որոնց իրենց ներքին բաժանվել են կարեռների ու երկրորդականի: Գամի փայտի բոլոր մասերով անցնում է մանրանկարչական հստակությամբ արված ուկյա զարդանախչը՝ երբեմն ծաղկի

⁷⁸ Հրատարակած էն. Արյանո-ռուսские отчоночения в XVII в.*. Состав. В. Парсамян, В. Восканян, С. Тер-Азакянц. Еր., 1953.

⁷⁹ Եպրաբեր անդամութեան և Հ. Достопримечательности Московского Кремля. Сост. А.Л. Ведмад. М., 1843, стр. 51—52. Խոր Զարարը չայտում է առեւ որ զամբ արմատները ու չափմանքը գեցէ եւ նշանակութեան բակ փիրուզները Բրանում. Собрание актов относящихся к обозрению истории армянского народа. М., ч. II, 1835, стр. 65.

ոճավորության ուրվագծով, երբեմն՝ երկրաշափական հաստու գծերով, բայց բոլոր դեպքերում՝ նրբագեղ, հարթությունը նաշակով լցնող և գամի կենտրոնական կոմպոզիցիաների համար ֆոն ծառապող:

Ազմաստեղ գամի կողքերի մասերը ծածկված են միաձոյլ ու կետավածներով կամ ուկեց ցանցելեն տերևներով, որոնց միօրինակությունը և դեղին հարթությունը խախտում է փիրուածերի երկնագույնը, սուսակների դեղինը ու կարմիրը: Արծաթյա ցանցկան զարդանախչի մեջ տեղափորված են վազող կենդանիների ուրվագծեր, որոնք դարձալ արծաթից են՝ սևադման տեխնիկապով արված: Բազկաթոռի ցածի մասի ուկու հատվածների տար դեղինը մեղմացվում է կենցաղային սուժեներ ներկայացնող լարի տեխնիկայով:

Գամի ստեղծող վարպետների համար կարևորը երկու հարթություններն են. թիկնակը և ցածի՝ ուռերքի հենարանի դիմացի տարածությունը: Այստեղ է, որ հատկապես իր ողջ փայլով ու շքեղությամբ համեն է եկել XVII դ. Նոր Չուղայի կիրառական արվեստի վարպետների նաշակն ու հնտությունը:

Սև թավշով ծածկված թիկնակի վրա ընդգծվում է մանր մարգարիտներով կուոզված ու կարմիր կերպարսի վրա ասեղնագործված ուղերձը: Այն երկու կողմից պայմանականորեն բռնած նիշշտակները նիշեցնում են XVII—XVIII դդ. հայ գեղանիկարչության մեջ (հատկապես Նոր Չուղայում և Էջմիածնում) լայն տարածում ստացած նոյնանման կերպարները: Ուկերեկ և արծաթաթել նուրք ասեղնագործության շնորհիվ նիշշտակների ֆիգուրները ստանում են նրբագեղ շարժում: Գոյնով կարևոր շեշտելու հմտությունն առկա է նաև գամի ներքեւի հատվածում, որտեղ սև արծաթի ցանցելեն ֆոնի վրա ծանրանիստ դեպի իրար են զայխ արծաթի սևադման և դրվագման տեխնիկաներով արված զուգ փղերի հարթաքանդակները:

Ազմաստեղ գամի վերի մասում հետագայում որոշ հավելյան ներ են կատարվել (ուկեց երկգլխանի արծիվը, Մարիամի և Հիսուսի արծեայ պատկերումները և այլն), որոնք փոխել են գամի կոմպոզիցիոն ամրողությունը, ժամանակի որոշակի գեղագիտական ու ոճական ըմբռնումները:

Ազմաստեղ գամի ստեղծման ժամանակ միաձոյլ հանդես է եկել Նոր Չուղայի արմեատավոր վարպետների՝ փայտ մշակող-
50

Անքի, ուսկերիչների, արծաթագործների, գեղանկարիչների, առևտնագործների և այլ բնագավառի մասնագետների արվեստը:

Նոյն այդ ժամանակ՝ 1660 թ., Խոջա Զարարին Մուլիկայի Դիմանագիտական ատյանում նարցնում են, թե կարո՞ղ է ճանաչներից (Պարսկաստանից) Մուլիկա ուղարկել «...ուսկերդողների, ուսկու և արծաթի գործի վարպետների, հոկտողների և ամեն տեսակի նկարիչների»: Խոջա Զարարը նայտարարում է, որ ... զանազան նկարիչներ Պարսկաստանում շատ կան, որոնց կաշիատի կանչել Ռուսաստան⁶⁰: Հայտարարությունից պարզ է դառնում, որ Նոր Ջուղայի գաղթօջախը հնում մասնագետներ շատ ունի: Դրանցից մեկի մասին Ս. Խավրիմեցին նիշատակում է իր «Պատմության» 29-րդ գլուխում: Դա վարպետ Հակոբարչն է:

Ա. Խավրիմեցին գրում է: «Այլ և պարտ վարեկանիմ մեզ ականատես եղելոց ոչ զանց առնել և ալլովք ևս շնորհալից արամքը, թշակու և են աշխարհականը. այլ զի են հասառով քիչատնեար և յազգես Հայոց, որը են պարծանը և օգուտ մերում ազգի, որոց անուանը են վարպետ Մինաս և վարպետ Յակոբարչ»⁶¹:

Հետագա շարադրանքում մամրանան խուելով նկարիչ Մինասի մասին, պատմին ավելի շի անդրադատում վարպետ Հակոբարչին, և դա տարատեսակ կարծիքների առիթ է համեիստացել:

Վարպետ Հակոբարչին համարել են նկարիչ⁶², իսկ նեղինակներից մեկը գրում է: «Խեղեր ժամանակի մեջ ընկրնված է թողլով ջրերուն երես տարտում անուն մը՝ որ Մինասին կառչած կը ծիսաց»⁶³: Փաստ է աւելին, որ նոյն այդ ժամանակ՝ 1640—1670 թթ. Նոր Ջուղայում անվանի վարպետի համարում ուներ մի անձնավորություն, Հակոբարչ անունով, որն առնչվում էր նաև տեղի տպագրական գործին⁶⁴:

⁶⁰ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. М., 1838. ч. II, стр. 65—66.

⁶¹ Պատմաթիվ Առաքել վարպապիքի Դարբնեցոյ Վազարշապատ. 1896, էջ 409.

⁶² Ա. Խեկյան, Նկարիչ Մինասի կրտեր ու ունդագործություն Հրմանին գէնը. «Անապահ», Գյորգի, 1938, աշխատական:

⁶³ Հ. Անդրիկյան, Մինաս «Թաղածակար», Վեհանիկ, 1907, № 3, էջ 120:

⁶⁴ Ա. Հովհաննեսյան, Գրգորեակ Հոյ ոգատակրոֆուն մարք պատմությունից: Հ. Հ. Իր., 1959, էջ 167. Ք. Կուկուրյան, Ն. Անդրկյան, Նոր Ջուղայի տպարանում, «Դրախն թիրթ», 1979, 30 հունվարի:

1638 թ. Նոր Զուլայյում հրատարակված «Սաղմոտարանի» նիշատակարանում կարդում ենք. «...և ես ձնուսու և օմանուկ գործոյ նոցւոր որդեական իմ վարդապետ Յակոբը Ձակորչանն...»: Խաչատոր Կեսարացո կողմից նիշատական այս Հակոբը Ձովհաննեսի որդին) գևաց Խոտախա, տպագրական գործը սովորելու⁵⁵: Երա կառարած առաջին կաղապարմենքը, փայտյա տառերն ու շիրատարակված Աստվածաշնչի համար պատրատված Շեարազարդումների փորագրությունները այժմ պահպանվում են Նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի թանգարանում⁵⁶:

Հետագայում Հակոբը դարձավ Սպահանի պալատական հուսների պետը (Կիրառական արվեստի գործեր էին պատրատում), արժանացավ «Խաղաշ Բաշի» (Եկարիչների գլխավոր) տիտղոսի և գրականության մեջ հաճախ հանդիպում է Հակոբը վարպետ կամ Հակոբ Հովհաննես (Jean Jacques) անուններով⁵⁷:

Դեռ է ննթադրել, որ ոչ միայն Նոր Զուլայի տպագրական գործում ոնենցած նրա մասնակցությունն է հիմք հանդիսացել Հակոբանի անունը Ա. Դավիթինցու: Կողմից «Պատմոթյան» մեջ ընդգրկելուն: Պալատում անվանի վարպետ լինելը, փայտի գեղարվեստական մշակման բնագավառում նրա հանդես քերած հմտությունը (իսկ գրքի կաղապարմեր պատրատելը և հատկապես նկարազարդումների կիշտներ ստեղծելը վարպետից պահանջում էր փայտի գեղարվեստական մշակման մեծ հմտություն), իր արվեստով հասարակության մոտ ձեռք քերած հարգանքը, անհանձ լայն տարածում ստանալը պետք է հիմք հանդիսանային պատմիչի ուշադրությանն արժանանալուն: Կարելի է ենթադրել, ժամանակի կիրառական արվեստի խոշորագույն օրինակներից մեկի՝ Ազմատն գանի ստեղծմանն անմասն չի մնացել նաև անվանի վարպետը, եթե նկատի ունենանք, որ Մոսկվայի դիվանագիտական ասյանում Խոջա Զաքարը հայտարարում է, թե գանի պատրատվել է «Մարտանում, պարտական վարպետների

⁵⁵ Խաղատուք Աթենք Զուլայքի, Պատմութեան Պարսից Վագարշապատ, 1995, էջ 118:

⁵⁶ Այս հոգագործներից սղամի է Հովհաննես Մրրուց, նոր Զուլայքի Ամենափրկիչ վանքը Հովհաննեսաթագու հեղեղութ ցումի մուսերը նկարագրելիս (Խուռավարչական հեղեղութ իսրաւելիք և գրամսեան Թրամատի հյուերից), Տես՝ Անդրեյն, Հայ հերոզարքութ XVII—XVIII դարերում, Եր., 1974:

⁵⁷ Տաճ. Արքինյան, նոր Զուլայյում Հայերու տահարք ժէ զարու, ունեածիու, Փարիզ, 1995, թ. 4, էջ 21—26:

միջոցով» և կարող է պատրաստել տալ որիշ գամեր՝ ավելի թանկ ու ավելի գեղեցիկ⁶⁰: Եսկ որ փայտի գեղարվեստական մշակման արվեստը բարձր մակարդակի վրա էր Սպահանում, վկացում են ինչպես մասնաճկարչության մեջ արտացոլված կենցաղային իրերի սրատկերումները⁶¹, նույնպես և այս նանգամանքը, որ 1666թ. գալով Մուսկվա, Շկարիչ Բոգդան Սալյանովը ձեռնամոխ է լինում բազմապիսի փայտյա աշխատանքների կատարմանը: Նկարագրում է պահարաներ, աթոռներ, մատուցարան—սեղաններ, փոքր շախմատ, խաղայիքներ (թմբուկներ, գատկի ձվեր, թոշուններ, գայլեր և այլն)⁶²: Նրա պատրաստած փայտյա խաղալիք—ոչխարները նանցնարարվում է Շկարագարդել «այնպիս, որ նրանց վրայի բուրդն իրը խմական է»⁶³: Բոլոր դեպքերում, Նոր Չույան ուներ փայտի գեղարվեստական մշակման բարձր մակարդակի վարպետներ, որոնց աշխատանքի կատարելության վկայությունն է Արմատե գամբ:

Հայ իրականության մեջ գամերի ու արողների բազմատեսակ ձևեր են գոյություն ունեցել, որոնց նետաքրքիր օրինակների պատկերումների հանդիպում ենք ձեռագրերի մանրանկարներում⁶⁴: Պահպանվածը անհամեստ թի է: Երկու գամ—նմխանիներ ցուցադրված են Էջմիածնի տաճարում, որոնցից մեկն օտար Վարդանի աշխատանք է: Հայ Միքայել Չամչյանի «արոռ մի փառազարդ, Հոռմի պապ Խնոկեանոյի 1697 կամ 1699 թթ. Խացատոր վարդապետ Կարմնեցու միջոցով նվեր է ողարկել Եղիազար կաթողիկոսին»⁶⁵:

⁶⁰ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. Ч. II, М., 1838, стр. 66.

⁶¹ Կոտենագրանություն 1660 թթ. Առաջիր Առավագայլերը (ԱՆ 201, 204).

⁶² А. Викторов, Описание записных книж и бумаг старинных дворцовых приказов, 1613—1725. М., 1883; Ив. Забелин, Перечень иконоческих и живописных работ московских дворцовых и городовых мастеров XVII ст. В кн.: «Русский художественный архив», 1894, СПб., вкл. I.

⁶³ Ив. Забелин, Домашний быт русских народ в XVI и XVII ст. М., 1915, ч. II, стр. 638.

⁶⁴ Առաջիր Պատրիան, Արժանակներ ու հենցաղը Հայկական ժողովրդություն: Եր., 1973, հիմ. XXII—XXIV:

⁶⁵ Միքայել Չամչյան, Պատմություն Հայոց: Հ. Պ. Վահանիկ, 1755, էջ 225: Այդ ժամին Ժիշտափում է առա Առաքել վահեցի առանձինազիրը (ՀVIII դ.-յ) եւելով, որ վայրը կատարվել է 1699 թ.: Անոյ ժամանակաշրջանները. ՀXII—ՀXIII դդ.ս, կազմեց Գ. Ա. Տակր-

Գեղարվեստական արժանիքների գնահատության առումով Եշմակալից է Էջմիածնի տաճարում պահպանվող այն պատրիարքանը, որը, պվանդատան դուների նետ միասին, 1721 թ. բերվել է Էջմիածնին: Գամբ նարտարապետական ամրողչական կառուցվածք է, որի արտաքին զգայի մասը ծածկված է փղոսկրով, իսկ մեջացած տարածությունները ներազարդված են: Այս առանձնահատկության հետ միասին, որտեղ հանդես է եկեղ սահմանագործի և զարդանելմարչի հմուտ աշխատանքը, գամբ ստեղծման մեջ կարևոր տեղ են գրավել փայտը փորագրողի մտահացումները³⁵:

Էջմիածնի վանքի բանգարանում պահպանվում է փայտյա մի գամբ, որը պատրաստվել է Մահրասում (Հնդկաստան): Գամբի թիկնակին փորագրված է Արարատը՝ իր երկու գագաթներով, Նոշի տապանով, որի երկու կողմերում հրեշտակներ են պատկերված: Գամբը կրում է եվրոպական նույնատիպ կանոնիքի ազդեցությունը, գեղարվեստական ըմբռնումներով էլլենկարիկ է³⁶:

Փայտի գեղարվեստական փորագրությանը մասամբ ուղեկցել է ինկրուստացիան: Խելքրուստացիայի արվեստը հայա-

ցնեց: Հ. Դր., 1851, էջ 268; Հ. Զ. Ծր., 1856, էջ 420: «Դրանք պատճեմնեած քրիստոնեական ուժամբընի հատկածութ կարգութ ենք, որ այս թագն (1852—Շ. Ա.) պատճ ֆանիկաց ընթաց առաջնա հօգիր անձան մեջու նահանգութ կաթողիկոսին, զարձանալիք աթոռ մի, և պատճական գաւազան մի, և որդին զից ընայ վայ անձի ոչ պահանու թիֆյա, 1912, էջ 119»:

³⁵ Գամբի արձանագրությունների են ոչինչեցու պատճեմացարեան Ի յիշառակ անձից Մաշտակ Մինասի որդի Անդրեանի և Կամբաւացի Նազարի որոշ մասնեան Անդրեանին, և անձան զարձից եղանք, թափի Աման (1721) ի Հայոցպատճեմն հանակ Առաստանու սրբազն կաթողիկոսի անձանից Հարց և Հազարարքաթեամբը Ֆը Տագնանեան և այլ Գեղար վարդապետաց:

Ցանում ու Հայոցպատճեմն ուրց Առաստանու սրբազնի սուրբ Էջմիածնի և Հայոքարքաթեամբը Բայրիցի Տագնանեան և առաստացի Պետրոս վարդապետաց յիշառակ է անձից Մանասի Մինասի որդի մանասի Անդրեանութիւն, և կամբաւացի Նազարի որդից՝ Մանասի Անառեան, Մարտիրոսին, Զարուհիքին, և նույնաց, և անձանը ազգաց և զաւակաց Աման (1721) թիվուն: Հրապանակած է: Հ. Ա. Էջմիածնի, 1852, էջ 43—44: Նույնառաջ սազանազար բաշկաթու և առ պատճեմնեան Ան Օրբանակի որ, մաս էկականում, իսկ շրեք փորագրած ունինած ու հերազարդ ամուշամանի էր կառուցված Անառիայի որ: Կարաւան վանքի որդի գերեզմանի մրց Արքայանու Ա. Պատուիին Հայ Անառիայի Հ. Ա. Պատու, 1937, էջ 985, 986:

Արձանագրությունն է՝ «Ճիշտակ ի տիկին Ովանես Յարութիւն Արքակու ու աթոռն սրբու Էջմիածնի. իր Մագսաւ, 1827»:

բնակ տարրեր վայրերում զարգացման տարրեր աստիճան է ունեցել: Փղուկրի կամ կրիայի զրանի, ինչպես նաև զաղտիկուոհի փոքրիկ կտորներով ծածկված դրները, զարդարութերը, ժողովրդական գործիքները, զենքերը արևելյան կիրատական արվեստի ուժեղ ազդեցությունն են կրում: Հայ վարպետները այդ գործով զրադիկել են Իրանում, Հնդկաստանում, Մուրշիջայում, Արաբական երկրներում, որտեղ լայն տարածում է ունեցել ինկրուտացիայի արվեստը (նիշենք նշանակոր խաթամն իրերը):

Ինկրուտացիայով արված լավագույն գործերից են Էջմիածնի ավանդատան դրները, կատարված 1721 թ. (Հայաստանի պատմության պետական թանգարան):⁵⁶ Ինչպես վկայում է դրան արձանագրությունը, այն Էջմիածնին է Ավիրել ապուչեղի Ազատեց սառավ Հակոբը, որը կարող էր դրները պատվիրել և Հընդկատանում, և Իրանում գործող հայ վարպետներին, քանի որ հայ սաղափառությունը նիշնականում կենտրոնացած էին այդ երկրներում:

Դուների զարդանախաչի կառուցվածքը հիշեցնում է գորգերի դասական կոմպոզիցիան: Կենտրոնական մասը երիզված է մի քանի շարք տարրեր զարդարանդակներով: Ներսի մասում հարթությունը լցված է որորապտուզ բուական նախշերով, որոնք վերջանում են զանազան տեսակի ծաղիկների ոճավորված հատվածներով: Զարդերի դասավորությունը սիմետրիկ է, նեղկա—պարսկական ոճի: Կարևոր փողոսկրի դեկոնակարիքույնի և փայտի մուգ շագանակագույնի համադրություններն են, որտեղ խորությունների (փորվածքների) ստվերներն ընդգծում են սաղափե մասերը⁵⁷: Այս դրները եղակի չեն եղել: Ագուլիսի սր-

56 Արևագրաթյունների էլ. ո՞հ Հայրապետութեան մասն Աստածառուոր որբազնի յիշուակ է ապուչեցի Ազատեց սառավ Յակոբը և Հայրաքրծելումը Աստածառուոր Շնորս վարդապետի Թմէլ 1721 թվեաւ: Ո՞հ Հայրապետութեան մասն Աստածառուոր որբազնի յիշուակ է Ապուչեցի Ազատեց սառավ Յակոբը և Հայրաքրծելումը բազիչեցի Յաշնանէս վարդապետ Թմէլ 1721 թվեաւ: Հ. Տախոսունիանց, Սորոցքութիւն կաթողիկէ էլեմիանի և Ծինգ զառաւաց Արքատույ: Էջմիածնի, Հ. Ա. 1842, էջ 44—45:

57 1888 թ. Էջմիածնի տաճարի համար պատշաճավեցն փայտայ երեք նոր զաներ, որներ պայտիքն ունեն նույն այժմ: Դրանք պատրաստվել են Թթվիթուած, փայտի փարագրինեց Ֆրանկի և Ջետեր եղայրների հազմից: Դները գնդարդիմական ընտիր փարացրություն լունեն Սուզ զարգացը հարազած ու փակցված են փայտ և մարմար: Ա. Գրիգորյանց, Միջազգային Ա. Էջմիածնի զաների տոթից և նոր Դար, Թիֆլիս, 1890, 17 պատուի:

Հովհաննես եկեղեցին⁹⁹, Կևարիայի սր. Կարապետի վանքի սրբի գերեզմանի խորան—մատուռը (1761)¹⁰⁰ ունեցել են սադափն իմկրուտացիա արված դոներ: Գ. Հովհանիանը Երուաղեմի սր. Հակոբյանց տաճարի գաղտնիկուն գարդարուն դոների (1731) հրապարակման կազմակցությամբ այն միտքն է հայտնում, որ այս արվեստը ծագումով պարսկական է, սակայն հայ վարպետները նըրանցից վերցրել են միայն տեխնիկական կողմը: Հայ վարպետները հորինում են հայկական զարդանախչեր և դրւերում են տեխնիկական ինքնուրույն հնարքներ¹⁰¹: Հիրավի: Երուաղեմի դոների շրջանակների, երանց երլու կողմերի տարածքի բուսական զարդանախչերը ոչ միայն թելադրված են մանրանկարների ավանդներից, այլև զգալի առնչություններ ունեն ժամանակի որմաններաշահան արթևատի մեջ: «Հակոբ ծառան», ինչպես անվանում է իրեն դրան վարպետը, ժամանակի խոչը արվեստավորներից է, որի վկայությունը դոների ընտիր ձևակորուսն է¹⁰²: Այս դոները բացառիկ չեն Երուաղեմում: «Նոյնանման աշխատանքներ կան նաև այլ խորաններում, բայց սրանք ունեն այն առավելությունը, որ ստեղծված են միայն ընտիր սպիտակ գաղտնիկուի կոտրներից:

Հայկական գեղարվեստական փայտի փորագրության արվեստում առանձնակի խումբ են կազմում դաշի և գրքի նկարագրդման համար արված կադարարները:

⁹⁹ Արձնագրություններ էր. օճշշատկ է զուս այս Հայուսմին և հօգածիցն և որպաց եռքի ԱՌ պղոքի աշխատաւորցն թիվ Բ. Ա. Խումբը, Պայմեն Միջին, (առաջ առնելիք): Է ՁՅ: Օքնու և հիւստիւ փայտից լին եռք նրանցից միաւունքն կոմ սր. ներսն Հայուսմայի վանքի գնաեր՝ բակաւակարդ ու արձնագրություններց: Գ. Այսամբիան, Արգելիա, Դաշիք, 1947, էջ 32:

¹⁰⁰ Արձնագրություններ է այս գեղեցիունի գույն սր. Կարապետի տաճարին Պատմաք Պատմաք պատմատուրին, և Ըսնքուցայ եզրոք նոյնայք, և մաք նույի, ի բուն Թիվ (1761): Համաշխարհային առաջին պատմապետի տարիներին գույն թուրքերը ուղափակել են Ստոմբուլ: Ազգային Ա., Պատմաթիւն Հայ Կասրիչ: Հ. Ա. Դաշիք, 1937, էջ 377, 388:

¹⁰¹ Գ. Հախեփյան, Մամեր արքնուոր սրբնակներ Երուաղեմի վանքից: «Պայքար» տարեկից, Քերոսի, 1950:

¹⁰² Արձնագրություններ են. օլ. Դեղնիկ զուս նինջան ի պարզութիւն Եւ Դրիարի և Տի Տօնական վարդապետ: 2. Վան պատապի սրբ Յնթ և է ժիշտակ նամրիսպէց նույսը պարցն որւնել: 3. Անասէ Խակարին, Առուրին, Խարիստին և Առամին, և նույն և ամ ուժիցու: 4. Ըմբերացոց թշնալը և ամ պղոքի առաջը: Ի Թիվ (1777) թիվն ընկեր Տիգր Տալէ: Խոյն տեղանու:

Դաշի կաղապարները նիմնականում պատրաստվում էին կաղնու, տանձնու կամ թղթենու փայտից, որոնք դիմացին էին, երկարակյաց և նարմար բազմապյուծն փորագրության համար:

Դաշի համար պատրաստվող կաղապարները նրկու տխայի էին մենքը՝ վարագույրների համար, որոնք ունենում էին մեծ նար-թություն, վարպետից պահանջում էին բարդ կոմպոզիցիա ստեղծելու հմտություն, ինչ-որ մի տեղ նաև գեղանկարչական ուսակությունները: Դաշող վարպետը պետք է լիներ փայտի գեղարվեստական փորագրության հմուտ, գիտակ անձնավորություն: Մին աշխատանքների, օրինակ դաշազարդ վարագույրների կաղապարներ չեն պահպանվել, սակայն փորագրման գործի վերջնական արդյունքը հանդիսացող վարագույրները նաև աշխատանքի առաջին փուլի վկայություններ են (Եջմիածնի վանքի մին վեճարան, Տաճարան Քանզարան, Հայաստանի պետական պատկերասրան): Ըստված թեման փորագրվում էր երկու ձևով: Առաջինը՝ փոնը փորվում էր, իսկ նկարը, սյուժեն մնում էր բարձրության վրա: Երկրորդը՝ սյուժեն փորագրվում էր, իսկ փոնը մընում էր փայտի սկավառական հարթության բարձրության վրա: Կաղապարի փորվածքից էր կախված դաշն գործի գունային նընշեղությունը, երա լուսավոր և սուլերու մասերի արտահայտչականությունը, կերպարների շնչուադրման և առանձին նառվածների լիարժեք օգտագործման հնարավորությունները: Դաշն վարագույրների թեմաները կանոնիկ սյուժեներ են, որոնց հայութիւնը վարպետները կարող էին ներցնել տպագիր գրքերի փորագիր նկարներից կամ XVII—XVIII դարերում նոր բարի ու զարգացում ստացած նկելեցական նկարչության օրինակներից¹⁰⁰: Դրանց մեջ կարևորագույն տեղը գրավում էն Քրիստոնի կամ Գրիգոր Լուսավորչի կամքից վերցված դրվագները: Խորը փորագրության տեխնիկայով արևած կաղապարները բարկացած էին լինում առանձին հատվածներից, յորաքանչյուրք առանձին սյուժեով, որոնք տպագրության ժամանակ հավաքում և ատեղծում էին միասնական կու կոմպոզիցիա: Դաշն վարագույրների կարևորագույն կերպարներից են Աստվածածնակ-

¹⁰⁰ Л. Дурново, Армянская набойка. М., 1953, З. Тараки, Набойка и Армения. Ер., 1978.

ըլ, Գրիգոր Լուսավորիչը, սր. Ստեփանոսի, սր. Գևորգը¹⁰ և, իմարկն, դրվագներ Քրիստոսի կյանքից: Կենտրոնական պուտենարից էր «Խաչելությունը», որի գործող անձինք «դաշվում» էին բաց վարդագույն կամ բաց դեղնագույն հատվածներով՝ կապույտ ֆոնի վրա: Քանի որ վարագույրների կերպարները պարբերաբար կրկնվում էին, ապա շատ հաճախ ոչ միայն առանձին այսմենների կաղապարներ էին պատրաստվում, այլև՝ առանձին կերպարների: Կաղապարը պատրաստող վարպետի համար կարևոր նորագիծն էր: Ֆիգորների գգեստների հարթությունը, պյումներն իրարից բաժանող հատվածները, վարագույրների ընդհանուր նորագծերը դաշվում էին մասն ծաղկանեկարներով, որը փորագրող վարպետներից պահանջում էր մեծ հմտություն, նաշակ, զծի հստակ զգացողություն:

Կենցաղում օգտագործվող դաշազարդ կտորների նմուշներ պահպանվել են XIII դարից, ձեռագրերի նախատիտղոսաթերթերի (ֆորզացի) վրա: Դրանց համար օգտագործվում էր ընդունված փալսներից ամենապիհնը՝ կատեն: Զարդանախչը կառուցվում էր դաշի հիմքի վրա: Հիմնականում ծաղկանեկարներն էին, վարդակները: Պահպանված կաղապարների մի քանի նմուշները (Հայաստանի պատմության պետական բանօքարան) լրիկ պատկերացում են տալիս նրանց առեղծող վարպետների աշխատանքի մասին: Վարպետը խորը փորվածքով նեռացնում է դաշի ֆոնի համար աներածեցու մասերը, բարակ հատվածով թողնում է զարդանեկարի ներ երիզը, որտեղ կարևոր նարք մշակում է: Այսուեղան չկա ժողովրդական փալսն իրերին բնորոշ փորագրությունը, որը կառուցված էր նուանկյունի փորվածքից առեղծված կոմպոզիցիայի վրա:

Պահպանվել են նաև կաղապարներ, որոնք ունեն յայն երիզներով վարդակների փորագրություն: Կյոր տարածքի կենտրոնը կազմող շորս մնխակների նորը զծերը մշակված են յայն հիմքով: Կաղապարների ընդհանուր փորվածքի մեջ ինչ-որ անփություն կա: Վարպետները չեն ձգուում հասնել կաղապարի վերջնական մշակվածքին: Նրանց համար կարևոր նիմնական նորագծերն են, նիմնական նախազարդը, իսկ մնացած մասերը

¹⁰ Ան թվականում կազմակերպությունը ուժինեմակարգ ուժինեմակարգ է հասկացնում սր. Գևորգի պատկերը պահպանվել է Տաղավարության մասնակիության մեջ:

մնում են անմշակ: Սա հայկանալի է ու արդարացված, եթե նկատի ունենանք, որ դաշն կաղապարները մեկ այլ արվեստի՝ դաշի համար ստեղծվող նախապատրաստական գործեր են: Վարպետների համար կարևոր արտաքին շերտի երիզների կողոքում էր, իսկ փորվածքի խորքի փայտյա մասը մնում էր անմշակ և դաշելու ժամանակ ծածկվում էր Շերկով: Քանի որ այդ կաղապարները նախատեսված էին կտորի վրա գեղարվեստական ձևավորում ստեղծելու նպատակով, ապա վարպետները նախընտրում էին փոքր ծաղկանկարներ, տերևներ, աստղիկներ, մանրանկար խաչեր, կետորով ստացված շրջանակներ, որոնք փորվածքի ամենամեծ ու պարզեցված ձևներ էին: Կաղապարներն օգտագործվում էին զանազան նամադրություններով, մինչև Երանց մաշվելը, իսկ զարդանախչերն ունեին դրանքի մշակված նախօրինակներ: XVII—XVIII դդ. հայկական դաշտավաստի, նշանակում է նաև Երանց փայտե կաղապարների, կարեռ կենտրոններ էին Մադրասը, Սպահանը, Վանը, Ելիշոկիան (Թորայը), Իզնիկը, և Պոլիսը: Սպարժիայի արհեստակորական բազմարվանդակ կրակերում ստանձնակի տեղ էին գրավում Մանուսան (զգեստների համար բազմագույն նախշազարդ կտորները) և Եպոման (դաշած շքե կտորներ), որոնք արտահանվում էին Եվրոպա: Ինչի կաղապարներ պատրաստելու նոր տեսակը XIX դ. I կետում ներմուծեց ճարտարապետ Սարգիս Խալֆան, որի անվանն ավելացավ նաև «պատմանի» վարպետի պատվավոր անվանումը¹⁰⁴:

Թուրք նամապարմորդ Էվլիա Չեղեպին, 1650 թ. այցելելով Երզնկա, գրում է: «Նրանք հարյուր մարդ են, 25 արհեստանոցներով: Մեծ մասամբ նայ են Թորատից և Սվազից, ինչպես նաև պարսիկ և հնդիկ տաղողներ, որոնք զարմանալի նորք ծածկոցներ և վարպարույններ են տպում շիֆ վրա»¹⁰⁵:

Բնական է, որ այդպիսի մեծ արտադրության համար անհրաժեշտ էին նաև փայտի փորագրության վարպետներ, որոնց աշխատանքից էր կախված դաշը տպող վարպետների նետագա գործունեությունը:

XVII—XIX դդ. հայկական փայտի գեղարվեստական փորագրության արվեստի աշխարհագրական լայն տարածման մեջ՝

¹⁰⁴ Արդյունքն Ա., Գառամարթիք Մազմաթիզ Հայոց, Գերման, 1961,

¹⁰⁵ The Travels of Evlia Celebi. London, 1850, vol. 2, p. 220.

առաջնամերք տեղերից մենք պատկանում է Մադրասին: Մայրասում պատրաստված դաշնօքարդ վարագույրների և կտորների ընթանուր գեղարվեստական կառուցվածքը կաղապարներ պատրաստողների՝ փայտի փորագրության հմտութ վարպետ լինելու վկայությունն է:

Փայտի գեղարվեստական փորագրությունն իր գարգացումն է ունեցել նաև նայ գրքի տպագրության ասպարեզուն: Տառարի ընտրությունն ու շարվածքը, նկարների փորագրությունների պատրաստումը, որոնք սկզբանական շրջանում նախատիպ էին ունենում օտարամուտ փորագրությունները կամ սրբանկարները, փորագրոդ վարպետներից սրբանշուն էին առանձնակի հմտություն, քանի որ դա արվածուի մի նոր տեսակ էր նայ իրականության մեջ: Այն սկիզբ առավ XVII դարի սկզբներին:

XVI—XVII դ. և XVIII դարի առաջին կեսին տարեր տպարաններում հրատարակված գրքերում հանդիպում ենք փայտի փորագրության տեխնիկայով տպագրված զյսագրերի, լուսանցազարդերի ու էջային առանձին նկարների, որոնց ստեղծող վարպետներից շատերի անունը հայտնի չէ: Պահպանվել են Մկ. (Մկրտիչ), Նհիպ. (Նահապետ), Բարտեղ և Հակոբ Մկրտչացիների, Հակոբանանի, Մկրտիչ Շոռորեցու, Հարություն Վահարշապատեցու, Մանուկ Կեսարացու և այլոց անունները:

Ընդհանիներից էր ծաղկարարության և փորագրության արվեստ Կ. Պոլսում, Սարգսի ծաղկարար վարդապետի մոտ սովորած Մկրտչի որդի Գրիգոր Մարգվանեցին:

Մինչև Մարգվանեցու հանչես գալը XVII դարի վերջը, նայ տպագիր գրքերում օգտագործում են ելորուացի նկարիչների փորագրությունները կամ հրատարակիչների կողմից այլ գործը հանձնարարվում է օտարներին: Օր. Վահանդաշիների հրատարակություններում հանդիպում ենք Ծիդրլանցի նկարի Կոտելիսի Վահ Զիմեմի կիշեների արտասարքություններին: 1666 թ. Ամստերդամում հրատարակած առաջին հաներն տպագիր Աստվածաշնչում հրատարակիչը՝ Ռուսան Երևանցին, օգտագործեց Ծիդրլանդցի մեկ այլ նկարչի՝ Քրիստոֆ Վահ Զիմեմի այլ հրատարակության մեջ օգտագործված կաղապարները, իսկ Ապոկալիպսիսի տեքստում նույնությամբ տեղադրեց Ա. Դյուրերի համառնության փայտափորագրությունները:

Գրիգոր Մարգվանեցու հրատարակած գրքերի նկարագար-

դրսմներում, նայ տպագրական արվեստում առաջին անգամ, հանդիս են նույն գալիս ավելացրանական թևմանըի ոչ միայն ինքնուրույն մեկնարանումներ, այլև նրանց «հայկականացում», որը կը շնչեները սպառքաստող վարպետում սրբանացում էր առանձնակի ստեղծագործական հմտություն:

«Յայսմավորքի» (1706), «Ազաթանգեղոսի» (1709), «Զենոր Գլակի» (1719) և այլ գրքերի նկարագրումներում Մարգվանեցին զգալի տեղ է նաև կազմակերպության մեջ ունեցած նրա տեղին, գործող անձանց զգեստներին, առանձին ժամանական պատկերավորության մեջ ունեցած նկարագրության մեջ՝ Գրիգոր Մարգվանեցու գրքի նկարագրության այսօրինակ առանձնահատկությունները պայմանավորված են տեխնիկական նմաների կատարելագործմամբ, երբ փայտը սկսում են փորագրել «թեկերին» նաև պակաս ուղղությամբ, այսինքն՝ փորագրվում է բոլոր ուղղություններով: Փայտի փորագրության այս տեխնիկայի առաջնային կապը կապվում է անգիտացի փորագրող Տ. Բյուֆիկի անվան նկան (1753—1828), մի տեխնիկա, որի առաջին նմուշները տևանում ենք Գրիգոր Մարգվանեցու կողմից նկարած, փորագրած և ուղագրած օրինակներում 1706 թ. Կ. Պոլսում հրատարակած «Յայսմավորքում»: Այս փաստի վրա հասուն ուշադրություն դարձրեց փորագրական արվեստի մեջ զիտուակ Պիեռ Հյուտմանը, երբ 1922 թ. Փարիզում բացվեց փայտի փորագրական արվեստի ցուցահանդես: Դրա նիման վրա, Արևների արվեստի խոշոր գիտակ Արմենեակ Սագրջյանը այդ փաստի վրա հրամիրեց մասնագիտների ուշադրությունը, Գրիգոր Մարգվանեցու կատարած բնուրագրելով «ինձ գլուխ»¹⁰⁶:

Տպարանաւեր ու հրատարակիչ, նկարիչ ու փորագրիչ Գրիգոր Մարգվանեցին իր հրատարակած «Յայսմավորքում» գրում է. «Յործամ զայս ամենայիշ կաղապարը բազում աշխատանքոր շինեալ հաստատեաց ձեռք իմ...»: Նշանակում է, այդ ամենին նա

¹⁰⁶ Արմենեակ Սագրջյան, Առամենայիշ փայտի վրաց փորագրութեան ըն մէկ գիտու: Խթանք էլլոց հ. Զարենք անվան քաղաքականթյուն և արվեստի թանգարանում, թ. Ազատակի թանգարանում և Շահակերպ, առաջեցր, Խթանքու, 1948: Մակրամատ սկզ. Մ. Դաշտակյան, Հայ գրքի նկարագրության պատմությունը, Գրիգոր Մարգվանեցի: «Հայ արվեստ», գիրք 2, եր. 1984, էջ 101—115:

հասել է դմվար ու քրտնաջան նրկար տարիների աշխատանքից մետք:

Հայ իրականության մեջ փայտի փորագրության անվանի վարպետներից էր Հակոբը, որն իր նորոր, Բարսեղի մետ, 1735թ. տպարան բացեց Կ. Պոլսում: Հավանական է այն նորադրությունը, որ Երանք պատրաստել են «Հազմանների» կաղապարներ, ապա և հմտացել տպագրական ծաղկարարության արվեստի մեջ¹⁰⁷: Բնական է դաշի համար կաղապար պատրաստողից դեսի գորի կիշիների մասնագիտության անցումը, բանի որ վարպետոր նրկու դնապըս էլ գործ ունի փայտի՝ տպագրության համար մշակման մետ: Մյուս կողմից, XVII—XVIII դր. հայ իրականության մեջ տեղի էր ունենում արհեստների և արվեստների բաժանում, ընդգծում էին Երանց ասհմանները, ընդգրկման բնագավառները: Իսկ դաշի կաղապարները և տպագրական փայտն կիշիներ պատրաստելու արհեստները ընդհանուր բազմաթիվ գլուխեր ունեն իրար մետ և պատկանում են արվեստի նույն խմբին: Այսպէս որ շատ հավանական է Հակոբ վարպետի կողմից սյուն նրկու մասնագիտությունների տիրապետումը:

Հակոբի ձևավորած գորերի նկարագրադասներում («Քիչականություն», Կ. Պոլս, 1736, «Քարոզքիրք», Կ. Պոլս, 1740) պահպաններով գորի ձևավորման մանրանկարչության ավանդները, էջերի կանոնիկ դարձած կառուցվածքը, նաև նկատի է առնում նաև փայտի փորագրության հնարավորությունները: Մակերեսային, գծային փորագրության միջոցով նաև ձգուում է հասնել ծավալների ու առանձին հատվածների շոշափելի արտահայտչականության: Նրա ձևավորած գորերից մեկի էջի վրա կա «Յակոբ» փակագիրը, որը տեսնում ենք նաև նոյն 1740 թվին պատրաստված մի սկրոտեղի վրա (Հ. Խան-Շեկրյանի հավաքածու):

Հայկական փայտի գեղարվեստական փորագրության կարևորագույն հատվածներից է նրա կենցաղային—ժողովրդական նույնը, որն ընդգրկում է ամենօրյա կյանքում օգտագործվող բազմազան իրեր:

Պահպանված բազմաթիվ իրերը՝ դադրդանները, գործիքամանները, սկրոտեղները, գոլպանների կաղապարները, հավանգ-

¹⁰⁷ Հ. Քյուրոբ, Գոյապարագրական ճականները և ճականների հայությունը մէջ: «Բազմապետ», 1827, լի 328:

ները, գդալմերը, օրորոցները և կենցաղում անհրաժեշտ բազմաթիվ այլ իրեր, դարեր շարտնակ ձևավորվել ու փորագրվել են ինչպես առաջնազորների ու հյուսների, այսինքն՝ փայտի գործով զրադշուղ արհեստագործների, նոյնակա և այլ բնագավառներին շառնչվող մարդկանց կողմից: Զմեւակա երկար գիշերներին նաև շինականը ձևավորել է պատի մեջ փորված պահարանների փայտյա դրսերը, երեխանների համար խաղալիքներ և պատրաստել, օրորոց ու գդալ փորագրել, գործիքաման ու գդալաման և պատրաստել: Արանց հիմնական մասը (Հարատանի պատմության պետական թանգարան) ունի ցանցկեն փորագրությունների կոմպոզիցիայում կարևոր տեղ են գրավուու տերևների երկարածիգ կտրվածքներն ու նրանց համաշաք աստղաձև դրավագություններ: Սկզբունքների, գարանախչերի ու սղամանների կոմպոզիցիաները ևս հիմնականում կառուցվուու են կրոր ձևերի մեջ տեղավորված ճառագայթաձև տերևների ու եռանկյունաձև փոքրաչափ հատվածների տարրերակներից, որտեղ գիծն ու ձևը նըստակ մշակվածություն չունեն: Կարեւոր սիմետրիան է, նոյն զարդանախչի ուժումիկ կրկնությունը: Ծառ հաճախ հարթությունն ունի ոչ հակասար մշակվածություն, իսկ գործիքի մետքի առևայրությունը չի անհանգուացնուու այն պատրաստողին: Նոյնը տեսնուու ենք փայտն հավանագների ու սխտործեծիկների ձևավորություններուու, որտեղ նրանց երկարածիգ ձևերը հնարավորություններ են ստեղծուու նոյնիներ միշեցնող հատվածների, վեցաթև աստղերի կամ վարդակ—ծաղկեների ավելի խոչքրացած օրինակների օգտագործման: Հիմնական վարդակի կամ եռանկյունների կողքի տարածությունները փորագրով լցնուու է անհամաշափ կետային փորվածքներով, չխորանարով նրանց նշանակության մեջ: Այս ֆոնի վրա հատկապես առանձնանուու են դադողաները, որոնք թալիսմանի նշանակությունն ունեին: Դրանք պետք է չար ոգիներից, չար աշքից զերծ պամեխին գրողացու տընտեսության այնքան անհրաժեշտ անասունները: Փորագրուու բարակ ու փորրիկ փայտն կտորին տարրեր ձևեր էր տախի (կիսաշրջան, ներքուու աղեղնաձև և երրեմն՝ զանաձև), վրան փորագրուու կամ զծուու էր հավերժության ու արևի խորհրդանշիչները: Ծառ ավելի տարածված էին հարթ մակերեսով դադղանեները, որոնք զանակածներ ունավորված տարատեսակն են ներ վերին և տարածված ցածի մասներով: Դադղանեները հիմնականում

փորագրված էին սովորական դանակով, և ունեցյանաձև զարդարանշակա տարրերակմերի վրա կառուցված նարքությամբ, երբեմն՝ ցամցկեն փորագրությամբ, իսկ երբեմն՝ խորը և գծային փորագրությունների գուգորդումով, կուր մտածողությամբ, զի՞ ու նարքության ինչպահի ընտրությամբ:

* * *

Փայտի գեղարվեստական ճաւապետներից ու մանց անունները պահպանվել են նրանց գործների վրա կամ գրավոր նշառաւակություններում: Դրանց թվում՝ ճարտարապետ Միհրար Հյուսնը XIII դ. կառուցեց Գոշավանքի փայտաշեն եկեղեցին¹⁰⁸: Հայեափի որոշ տների փայտի աշխատանքների անկյուններում հանդիպում ենք վարպետներ «Խաչատոր», «Յովհաննես», «Հաննե» անուններին¹⁰⁹: Հայեափի Սալիքի բաղամասի տներից մեկն ունի փայտափոր դեկորով ուկեզօծ դամլին, որը վարպետ Խաչատորի աշխատանքն է (XVI դ.), իսկ մեկ այլ ապարանքի նյուրասենյակ ունի հոյակապ փայտափորագրման տեխնիկայով արված հարդարանք, Ալարագարդ է (1691) և ունի «Խաչատոր» իր Սուրբատ Պալի» ստորագրությունը¹¹⁰: Ստ. Լիսիցյանը նիշատակում է Նոր Բայագեստում կառուցված փայտն տան նեղինակ մուխսի Հակոբին, որը ոչ միայն շնորպ կառուցել, այլև զարդարանշակել է նրա որոշ հատվածները¹¹¹:

XIX դ. Ալյարին Թիֆլիսում մասն տարածում ունեն վարպետ Ավելիսի Միհրարյանի (Մարտունու շրանի Աստղաձոր գյուղից) դրվագված փայտն իրերը¹¹²: Կեսարիայի Գրիգոր Լուսավորչի եկեղեցում կար զարդարանդակած ուկեզօծ փայտն խաչկալ, որը փորագրել էր Ֆենքանցի Սուրբատ Գալֆան՝ բումարզացի վարպետների օգնությամբ¹¹³: Կ. Պոլսում փայտի նմուտ փորագրողի հա-

108 Ա. Ռուբենյան, Միջնադարյան Հայ ճարտարապետներ ու ժարգործ վարպետներ: Եր., 1963, լշ. 43.

109 Աւագիսպ Մյուսեյան, Պատմության Հայեափի Հոյոր: Հայեափ, 1940, հ. 2, էլ 740—742.

110 Աւագիսպ Մյուսեյան, Նշվ. աշխ., հ. 3, էլ 976:

111 Տ. Դ. Լևոնյան, Խ մատերիալ ու հաւաքածության աշխատանքների մասին: Հայաստանի պատմության աշխատանքների մասին: Տիֆլիս, 1924, էջ 136—137.

112 Ա. Ջապարյան, Կայսերական պատմության հայության մասին: Տիֆլիս, 1937, էջ 113:

113 Արգուրյան Ա. Պատմության Հայ նեարքա: Հ. Ա. Գուգրիք, 1937, էջ 827—828:

մարտմ ունեին անվանի ճարտարապետ Հովհաննես Սերմերյան ամիրան¹¹⁴, Ակարիչ ու ուներիչ Ռուբեն Մելքոնյանը (ծնվ. 1865)՝¹¹⁵:

Փայտի գեղարվեստական փորագրության արվեստը հնոց տարածված արվեստներից է նայ իրականության մեջ: Նյութի մատշելիությունը, մշակման նեշտությունը, կենցաղում փայտին հատկացված կարևորագույն դերը հնարավորություններ են բատողեղ փայտի փորագրման բազմակողմանի զարգանալուն: Մյուս կողմից, փայտի ոչ դիմացկուն լինելը, նրա շուրջ փշանապու և կոտրվելու հատկությունը նիմք են դարձել բազմաթիվ բարձրժեռ գործերի ոչնչացմանը:

Ինչպես կիրառական արվեստի յորաքանչյուր բնագալառ, նոյնպես և փայտի գեղարվեստական փորագրությունը սեղության կարգած է ժողովրդի գեղագիտական պահանջների մեջ: Նրանց փոփոխությունները է կախված նաև կիրառական արվեստի այս կամ այն բնագալառի հանդեպ ունեցած նետարրորդության ակտիվացումը:

Ճարտարապետական առանձին հատվածները, դաշն կայապարհերը, տպագրական կիշեները, գուղապաների կաղապարները, դաղդրաները, կենցաղային բազմաթիվ իրեն այսօր արդյուն չեն կարող ունենալ այն արժեքն ու նշանակությունները, որը նրանք ունեցել են անցյալու:

Եթե առաջներում այդ ամենը սերտորեն շաղկապահ էր ժողովրդի կենցաղին և թերապիամ էր նրա տնտեսական կյանքով, Կապա խորհրդային շրջանում փոխվում է փայտի գեղարվեստական փորագրության արվեստի բնույթը: Սոցիալ-տնտեսական նոր հնարքերությունները, նոր կենցաղավարությունը կանոնադրությունը նոր մոդում կիրառական արվեստի ամբանական մի շարք տեսակներ, իսկ փայտի փորագրությունը դառնում է հիմնականում ինքնույն ստեղծագործությունների մեջնաշնորհը:

Փայտի գեղարվեստական փորագրությունը մեր օրերում բոլորին նոր իմաստավորում և նշանակություն է ստացել:

Որոշ շրջաններում, ինչպես օրինակ Շամշադիմում, Լոռիում,

¹¹⁴ Մ[արդրյան], Հին որեր ու այդ որերն Հայ ժամանելեցը, Վանայի, 1901:

¹¹⁵ Առանձակ առանձ մը—«Ընդունակ տարեցաց ազգացն հիմնականությունը, Կ. Պոլիս, 1926, էջ 275.

Գուգարքում, Խջևանում, Հրազդանում, Սիսիանում և այլուր, դեռևս շարունակվում է որոշ իրենի պատրաստումը, բատկապես՝ գդալեր, գարանախչիկներ, տեփուրներ (սկոտեղներ), տաշտեր, որտեղ կարևորը իրի պահանջական գործածության մեջ կապված Փունկցիան է: Մերժեայացված արդյունաբերության մեջ կորցնելով իրենց ուժիշտար նշանակությունը, փայտի գեղարվեստական փորագրության իրերը ստանում են զուտ դեկորատիվ նշանակություն:

Համախմբվելով Երևանի ժողովրդական արվեստի մերժական կենտրոնի, ինչպես նաև Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանի, Երանց կից Փայտի թանգարանի շորջը, մասնակցելով Երանց կազմակերպած ցուցահանդեններին, շատ հաճախ վարպետները փոխում են նաև փայտի փորագրության իրի պահանջական նպատակադրումը: Ցուցահանդենային իր ստեղծելու ձգոտումն առաջ է մղում ինտարսիայի տեխնիկան, որի հնարավորությունները հիմնականում օգտագործվում են դիմանելարշական գործեր, բնանկարներ և կենցաղային իրեր ստեղծելուն:

Փայտի գեղարվեստական փորագրության անվանի վարպետներից էր Հակոբ Ազգույանը (1895—1965), որի գործերը նույնպես նեռու են ուժիշտար նպատակներից: Դրանք հիմնականում կճուններ են, բավանգ, սափոր, սկրոտելմեր ու սկանակներ, որոնք դեկորատիվ նշանակություն ունեն: Վարպետը հասուն ոշաբքություն է նվիրում իրի արտաքին ձևավորմանը, որից և բխում է զարդանախչը, իսկ սա էլ դառնում է աշխատանքի ընդհանուր կառուցվածքի հիմքը: Այդպիսի սկզբունքով են արված «Ծերամ», «Բամբակի կնգուղ» սկանակները: Երբեմն միջնադարյան գրքային նկարչության առանձին դպրոցների գեղարվեստական կերպարներն են թելաբրում սկանակի գեղարվեստական մտածելակերպը, երա բարադրիչ մասերը, պապես կոչված «սյուժետային կառուցվածքը»: Հ. Ազատյանը խորը փորիվածքով կարողանում է ստանալ ժամենելանման հյուսվածքի պատրանք: «Կիլիկիա», «Վասպորական» սկանակների առանձին ծավալների փայլեցումով ու խորը մասերի փայտի բնական ֆակտորայի պահպանումով կարողանում է լուսուստիքի պատրանք ստեղծել:

Ժամանակակից փայտի գեղարվեստական փորագրության արվեստում զգալի ավանդ ունի Հովհաննես Նաղաշյանը (1876—1968):

Նաղաշյանի հետաքրքրությունը դեպի արվեստի այս տևական պատահական չէր: Հետաքրքրությունը գալիս էր մանկությունը: Ամբապնդվել էր աշակերտելու տարիներին, իսկ որպես վարպետ՝ կատարելագործվել Ալեքսանդրապոլում, համբարձական սկզբունքներով բացած իր իսկ արվեստանոցում: Նաղաշյանը փայտի գեղարվեստական փորագրության հնարներով ձևավորել է եկեղեցիների դռներ (Կարսի, Երևանի ոուսական, սր. Հովհաննես եկեղեցիների դռները), կատարել է ճարտարապետական առանձին հատվածներ, ստեղծել է կիրառական արվեստի զանազան իրեր, առկայն նրա տարերքը կանույցը էր: Օգտվելով հայկական ճարտարապետական մի շարք հուշարձանների դեկորատիվ հարդարանքից, նա կարողանում էր յուրատիպ պատկերագրու մտածողությամբ այն հարմարեցնել փայտի մշակմանը: Նաղաշյանը կարողացավ սովորական ուսիիխտար իրին տալ գեղարվեստական տեսք՝ ազգային գեղագիտական մտածողության սահմաններում: Վարպետը զգալի դեր էր հաստիացնում կանույցի գույնին, որը նա ստանում էր ոչ թե արմեստական միջոցներով, այլ հնդկան, փայլեցման, լուսուատվերի, ինչպես նաև ձևերի գուգորդման շնորհիվ: Նա մեծ նշանակություն էր տալիս փայտի տևական լորենի կամ հաճարենի, որոնք յուրատիպ թեթևություն էին տալիս կանույցի հարթություններին: Նրա համար կանույցի ընդհանուր գեղարվեստական կերպարը որոշողը փորվածքի տեսակըն էր. բարձրաբանուակ, խորը փորվածք, գրաֆիկական զժի ներմուծում և այլն: Հ. Նաղաշյանը կանույցի նոր տեսակ շատեղծեց: Նա բաջանութ էր հայկական գեղչկական կամկարաստն, սակայն, զգալով եվրոպականաւոյն կանույցի տարածման հետանիքը, նպատակ դրեց, ընդհանուր ձևի պահպանման շրջանակներում, նրա արտաքինին տալ հայկական ոճի հարդարանքը: Ազգային գեղարվեստական կերպարների օգտագործման սկզբունքով են պատրաստված նաև Մատենադարանի սրահների դռները (1956), որտեղ Նաղաշյանն ազատ օգտվում է Մշո Առաքելոց վանքի դռների զարդարանդակների մոտիվներից: Նրա

արվեստը փայտի գեղարվեստական փորագրության բարձր երևույթ էր մեր իրականության մեջ¹¹⁸:

Ավանդականի ու նորի վրա է խարսխված շնորհալի երիտասարդ ստեղծագործողների արվեստը: Դեկորատիվ իրերի հետ միասին (սափոր, սկոտեղ, շերեփներ և այլն), նրանք փայտի գեղարվեստական փորագրության բնագավառն են ներմուծում բարձրաբանության մեջ տարատևականների օգտագործում, զգայի տեղ տպագրության մեջ ծավալների և ֆոնի արտահայտիչ զուգորդումներին: Այս երիտասարդների ուժերով են իրագործված միջնադարյան ճարտարապետական կորողների վերականգնման անհրաժշտ դոմերի և գրակալների աշխատանքները, որոնք դեկավարվում են Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից:

Ժամանակակից հայկական փայտի գեղարվեստական փորագրության արվեստի բնագավառում զգայի է ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խաչյանի ներդրումը: Նրա նախանձարներով են սբատրաստվել Գեղարդի վանքի և Երևանի սր. Սարգիս եկեղեցու դոմերը, որոնցում ստեղծագործարար են լուծված ազգային գարդարվեստից ընտրված մասնամասների զուգորդումները: Նկարիչն ունի նաև ճարտարապետության և նրա հաստվածների, ինչպես նաև ճարտարապետության ու դեկորատիվ արվեստի ներից մեկը նորույի ԲՇշեց Հոհիսիսինի եկեղեցու բակում գտնվող սինթեզի միանականության զգացողությունն: Նրա մուանդացում-վանատան բնոյնարան — դամիճի համար կամույքի ստեղծման ժամանակ:

Ընդունարան — դամիճի դոմերի բացվածքից այցելուի հայցըն բնելապում է բոլիարիկը, ինչպես նաև կենուրոնում դրված սեղանն ու նրա շորջը դասավորված չորս աթոռները: Աջ պատի տարածքը երեք բաժանում ունի անկյուններում բազմոցներ փոքր սեղաններով և փոքր աթոռներով, իսկ մեջտեղում մենակավոր բազմոց: Կամույքի տեղաբաշխման հետ անհրաժեշտ էր գրտնել նաև յորաքանչչոր իրի ձևը, այդ ձևի կապը ինչպես հարեւան

դարձած այլ իրի, Առյօնակու և հյուրասենյակի ընդհանուր կահավորման հետ: Անհրաժեշտ էր գտնել լուրջաբնշյուր իրի չափը, նրա հարաբերությունը մյուս իրերի չափերի հետ: Պատերին փակցվող թարեքներն ու գդապամանեները զուտ դեկորատիվ նշանակություն ունեին, որից և թերադրվեցին նրանց հարդարանքի զարդամուտիվները: Աթոռների, սեղանների ու բազմոցների ձևավորման հիմքը ուսիլիտար նշանակումն էր: Նկարիչը մեծ ուշադրություն է դարձնում հենակներին-աթոռներինը նարի են, իսկ բազմոցների հենակների ձևավորումներում նկատի է առնված նստողների մեջ ընկած տարածությունը, որոնց վրա տեղադրված են խաչքարեր միջեցնող զարդապահնեկներ: Սրանք կրկնվում են նաև սրբարանի դռների վրա, բազկարգուների ու աթոռների հենակների վերևում, բազմոցների ցածի մասերում: Փայտի ոլորքի մշակումներում օգտագործված է կիսափայլեցումը: Նկարչի ուշադրությունը դուրս չի մնացել ոչ մի հատված: Անզամ իրերի ուրերք մշակված են տվյալ իրի գեղարվեստական կերպարի շրջանակներում, նրա համամասնությունների ստեղծման սկզբունքների ոլորտներում:

Նոյն սկզբունքներով մեկ այլ կամավորում Գ. Խանջյանը ստեղծեց Երևանի մատանեերից մեծի համար: Այս գործում ևս երս օգնականներն էին փայտը մշակող վարպետներ Ռուբեն Տեր-Թաղենոսյանն ու Վահայիմիր Կարապետյանը, որոնք յուրաքանչյուր իր մշակել են սիրով, պատասխանատվության մեծ զգացումով, գործի խոր իմացությամբ: Աչք են շոյում իրերի կորածերք, նրանց ուրիշագույն հնտակ շեշտադրումները, զարդարանշակների նրբագույն մշակումները, փայտի ֆակտորայի զգացողությունը:

Կամույքի և ընդհանուր ձևավորման մեջ հնտաքրքիր է նաև մնտայա մասերի ընտիր օգտագործումը: Զնավորման մեջ կարևոր դեր են խալում պատերի սպիտակը, փայտի շագանակագույն երանգները, երկայի սևը, երևապտման համար ընտրված կամաշաղեղնագույն թափիշը, ինչպես նաև հնտակի գունագեղ գորգերը:

Գրիգոր Խանջյանը ստեղծեց կամույքի մի տեսակ, որին կարենի է տալ «ափանդոյ» և արդիականություն» անվանումը:

* * *

Հայկական փայտի գեղարվեստական փորագրության արվեստը զարգացել է կիրառական արվեստի մյուս ճյուղերին զուգահեռ, զարգացել է նրանց հետ ունեցած սերտ կապերի մեջ, ազդելով ու ազդվելով նրանցից: Փայտի գեղարվեստական փորագրության իրերի գեղարվեստական կերպավորման մեջ արտացոլվել են ինչպես ազգագրական ու մշակութային հասկացողությունները, նույնպես և գեղջկական աշխարհընկալման պարզությունն ու հստակությունը:

Հայկական կիրառական արվեստի այս ճյուղում ևս պարզուշ դրսեւորվել են ժողովրդի վառ ու պատկերավոր մուածելակերպի անսահման ննարավորությունները:

ՎԵՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԵՐ





1 Խոյսիկ: IX դ., Սևան:

Երևան, Հայաստանի պատմության պետական թանգարան (ՀՊԹ):

2 Խոյսիկ: IX դ., Սևան:

ՀՊԹ:






Յ Առաքելոց վանդի Թարգմանչաց ևկեղեցու դուռը: 1134:
ՀՊՊ



4 Մշն Առամելոց վանդի Թարգմանչաց նկեղեցու դռոր: Հատված:



5 Մշտ Առամելոց վանի թարգմանչաց հեղինեցու դրան շրջանակի
հատվածներ:



6 Մեսմի Առաքելոց վանդի դարբ: 1176:
ՀՊՈՒ




7 Մեսնի Առաքելոց վանդի դաւր: Հումբած:



8 Մեսնի Առաքելոց վանի դուռը։ Հատված։



9 Մեսնի Առաքելոց վանի դուռը։ Հատված։



10 Աևանի Առամելոց վանի դուռը: Հատված:



11 Աևանի Առամելոց վանի դուռը: Հատված:



12 Մեսանի Առամելոց վանդի դրամը: Հատված:




13 Դուռ Թեսդասիայից: 1371:
Անինգրադ, Պետական Էրմիտաժ:



14 Մեսնի Առաքելոց վանդի դամբ: 1486: .
Հայով



15 Մեսնի Առաքելոց վանի դառը. Հայագած:



16 Դուռ Թեոդոսիայից: 1572:
Անդրքաղ, Պետական Էրմիտաժ:



17 Գուկալ: 1164, Անի: Ա. կողմք:
ՀՊՂԲ




18 Դեակուն: Բ կողմէ:



19 Գրույն: Հասթամձ:




20 Գրակալ: Հատված:




21 Գրակալ: Հաստված:




22 Գրակալ: 1272, Անհ:
ՀՊՊ




23 Գրակալ: Հատված:



24 Գրակալ: Հատված:




25 Գրակալ: Հասոված:




26 Գրակալ: 1272, Ա. Հ:
Հայոց



27 Գրակալ: Հատված:



28 Գրակալ: Համոված:



29 Գրակալ: Հատված:



30 Գրակալիներ: 1164, 1272, 1272, 1272 պ.:

ՀԱՅՈՒԹ



31 Կաշելություն: Հայոց Թագի Ամենափրկիչը: IX դ.:
Էջմիածին, Մայր Տաճարի բանգարան:




32 Խաչելուրյան: Հայոց Թագի Ամենափրկիչը:




33 Խաչելուրյան: Հավուց Թանի Ամենափրկիչը: Հատակած:




34 Տարեկա վանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դպուք: 1614:
ՀՊՂԲ




35 Տարեկի վանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դռնը: Հատված:




36 Տարեկի վանքի Դրիզուր Խուսավարիչ եկեղեցու դռոր: Հատված:




37 Տարեկի վանքի Դրիզուր Խուսավարիչ եկեղեցու դռոր: Հատված:



38 Տարեկի վանդի Գրիգոր Խոստառիչ նկեղեցու դռոց: Հատված:




39 Խոստառոսի ցանց: XV—XVI դդ., Խելան:
ՀՊՈՒ



40 Խոսամբասի շահեց: 1713—14, Նոր Ջուղա:
Նոր Ջուղա, Գրիգոր Խոսամբաչյան եկեղեցի:



41 Ալմաստ զանք: 1659, Նոր Հայոց:
Մասկվա, Կրեմլ, Զինապալատ:



42 Գաղտիկուն դրս: 1731, Զմյուռնիա: Արևոտապելմ, սր. Հակոբյանց վանք:



43 Գաշի կաղապարներ: XVIII—XIX դար



44. Պատճեն կաղապար; XIX դ.
Հռովհ



45 Գուլպայի կազմակերպություն: Ա. Երևան: 46 Գուլպայի կազմակերպություն: Բ. Երևան:
XIX դ., Օձուն: Հայոց





47 Դադրնամ: XIX դ.:

Երևան, Հայաստանի ժողովրդական արվեստի ովհանական
բանգաւառ (ՀԺԱԹ):

48 Դադրնամներ: XIX դ.:

ՀԺԱԹ:

49 Դադրնամներ: XIX դ.:

ՀԺԱԹ:





50 Դադլան: XIX դ.
ՀծԱզք



51 Թաղթան: XIX դ:
ՀԺԱՊՐ




52 Թաղղղաններ: XIX դ:
Հմելք




53 Դարպանահեր: XIX դ.
ՀժԱԿԻ



54 Դադրաներ: XIX դ.:
ՀԺԱԳԲ



55 Գաղպաններ: XIX դ.:
ՀԺԱՊ




56 Գաղղրաններ: XIX դ.
ՀՅԱՂՊ





57 Ազգամուս: XX դ.։
ՀԺԱԿՊ

дб № 67
XX в.; грунтовка 65



дб № 68
XX в.; грунтовка 65






60 Կողամաններ: XIX դ.
ՀՊՈԲ

图 19 汉代漆耳杯及漆耳杯座

19. 漆耳杯及漆耳杯座

汉代漆耳杯及漆耳杯座

汉代漆耳杯及漆耳杯座



63 Ալուստան շղանձովիկ: XVII դ.:




64 Ալուստան շղանձովիկ: XVII դ.:



66 Հանձ: XIX դ.;
Հեղուար (1895—1965), Ալբանի:
Համազար




65 Հանձ: XIX դ.;
Համազար



68 2. Աղասյան, Սիմոն:
Հայկական



67 2. Աղասյան, Սիմոն:
Հայկական






69 Հ. Ազատյան. Սկանակ «Կեղուզ»:
Հիմք



70 Հ. Ազատյան, Սկանոսկ «Ենգույղ»: Հատված:



71 Կրիզու Խանջյան (ծնվ. 1926), Հայկական կամույթ: 1982:



72 Գրիգոր Խոնջյան, Հայկական կանույթ: 1972:

Научно-популярное издание
КАЗАРЯН МАРИЯ НИКЛЕЛОВНА
Художественная резьба по дереву в Армении
Ереван, издательство «Хорурдзин грох».
На армянском языке

Դիմումագրական եռավագույթական

ՄԱՆՅԱ ՄԻԳԱՅԻՆԻ ՊԱՇԱՐՅԱՆ
Փայտի գեղարվեստական փառագրությանը Հայաստանում

Դեղադիմական ձևագրությ
Կույտն Կովուգույն

Խեցուղիք՝ Լ. Լ. Սիմոնյան
Տէլ. խեցուղիք՝ Ծ. Գոբյալյան

Ա.Բ. № 6360

Հանձնված է շարժածքի 5.05.1986 թ., սահմանված է ապահովության 0.00.1952 թ.: ՎՃ
06601: Զազդր 70×30^{1/2}: Տարածք. 4.5+3.75 մատ. Կիրա: Ֆակտարեակ 5000: Գոտվեր Ն. 555:
զինք՝ Հա. 50կ..
«Հայության պրեզ Հրատարակչություն», Երևան-3, Տերլին 91.
Издательство «Хорурдзин грох», Ереван 9, ул. Теряна 91.
ՀԱՅԱ Հրատարակչության տպարան, 375310, ք. Էջմիածին:
Типография Издательства АН Арм. ССР. 375310, г. Эջмидзин.

QUL Ծննդաբառ Գիտ. Գրադ.



FL0230851

